1895 ՅՈՒԼԻՍԻ 18 (31) ՇԱԲԱԹ

№. 81—ՏԱՍՆԵՐԵՔՇՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 81

1895 ՅՈՒԼԻՍԻ 18 (31) ՇԱԲԱԹ

ԱՐԶԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է շաբաթը երեք անգամ, ուրբաթ և կիրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis Rédaction „Ardzagang“.

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և ազգ. օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ԱՐԶԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանջալամեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 Ռ. ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 Ռ.

Օտարաքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція "Ардзаганкъ". *իսկ արտասահմանից՝* Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang“

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Եւրոպական պետութեանց նոր դաշնակցութիւն և հայկական խնդիր։
Հեռեոդականութիւն հայոց խնդրի մէջ։
Դրան զիջումները։
Տաճկական-ռէֆօրմների ծրագիր։
Էմիլ Դիլօնի յօդուածները։
«Times»-ի հաստատութիւնը։
Մակեդոնեան (միայն Մակեդոնեան) խնդիրը։
Սասունցիք Լօնդոնում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Թեմիս Սրբ. Առաջն. վերադարձը։ «Արձագանքի» մի անճիշդ տեղեկութիւն։ Աւազակ Մուսաբելի բէգ Թաղի բէկ օղլու գործը։ Հեղեղի տուած վնասը։ Քաղաքային խորհրդի նիստը։ Երկաթուղի ռազմավիրական ճանապարհի ուղղութեամբ։ Պատժուած եպիսկոպոսներ։ «Մշակ» լրագրի հրատարակչուհու մահը. Վաբշավի բնակիչների թիւը։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ. — Հայերիկ Գնայսու։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Նամակ Քաջբերունիքից։ Նորէն։

ԳԵԼԻԷՏՕՆ. — Կաթողիկոս ամենայն Հայոց Մկրտիչ Ա. Խրիմեան։ Սասունցի Դաւիթ։

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ. — Նամակ Նիւ-Եորքից։

ՔԱՂԱՔԱԿԱՆ. — Ստամբուլի թաղման հանդիսից։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԶԱՆԱԶԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆՑ ՆՈՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Մարքիզ Սալսբիւրին ձգտելով Անգլիայի արտաքին քաղաքականութեան վարիչը բարձրացնել, հէնց առաջին օրերից սկսեց Գերմանիային մօտենալ։ Այժմ բոլոր նշաններից երևում է, որ Եւրոպայում մեծ պետութեանց մի նոր համախմբումն առաջ կըգայ, որտեղ կը մտնեն Անգլիան, Գերմանիան, Աւստրիան և Իտալիան։ Սակայն անգլիական աւանդական բաղաքականութիւնը դէմ է պաշտօնապէս դաշնակցութիւնների հետ միանալ։ Խօսելով այդ մասին, «Ս. Պետերբուրգսկիա Վեդոմոստի» լրագիրը նկատում է.

«Բայց հէնց հռատեսական դաշնակցութեան և Անգլիայի զուգահեռական դիպլոմատիական գործունէութիւնը կատարելապէս բաւական կը լինի, որ բոլոգարական, չին-ճապոնական, թերևս և այլ շատ խնդիրներում ռուսաց դիպլոմատիան, որ Ֆրանսիան է միայն պաշտպանում, բազմատեսակ դժուարութիւնների հանդիպի։ Հայկական խնդիրը մենք բաց ենք թողնում. անշուշտ լաւ է հաւատացած «Times»-ը, որ հաւատացնում է, թէ այդ խնդրում Մարքիզ Սալսբիւրին Ռօզբերիի քաղաքականութեանը կը հետևէ, միայն մոռացիր է Դրան վրայ իւր նախորդից աւելի վճռական կերպով ներգործել։ Ճարպիկ դիպլոմատիան հէնց նրանում է կայանում, որ որ և է պետութեան ընդհանրապէս դիմադրելով, որոշ դէպքերում նրա օգնութիւնից ու պաշտպանութիւնից օգտուի։ Մարքիզ Սալսբիւրին ընդհանրապէս կաշխատէ ռուսաց դիպլոմատիական յաջողութիւնները սահմանափակել, բայց հայկական խնդրում նա Ռուսիայի և Ֆրանսիայի հետ սիրով ձեռք ձեռքի տուած կը գնայ»։

—

ՀԵՏԵՌՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԽՆԴՐԻ ՄԷՋ

„Presse“ լրագիրը տեղեկացել է, որ հայկական խնդրին վերաբերմամբ մարքիզ Սալսբիւրիի տուած հրահանգները Կ. Պոլսի անգլիական դեսպանին, ոչնչով չեն տարբերվում այն հրահանգներից, որ տալիս էր լորդ Ռոզբերին։ Լրագիրը կարծում է, թէ միայն պէտք է ենթադրել, որ անգլիական դեսպանը իւր ապագայ գործողութեանց մէջ աւելի մեղմ կը լինի և այնպիսի եռանդով ու խստութեամբ չի պահանջիլ ռէֆօրմների իրագործումը։ Նոյն լրագրի ստացած տեղեկութիւններին նայելով՝ Ֆրանսիայի և Ռուսիայի բաղաքականութեան մէջ ոչինչ փոփոխութիւն չի եղել։ Հայկական խնդրի նախաձեռնութիւնը Անգլիային տալով, Ռուսիան և Ֆրանսիան համաձայն են միանալ նրա ամեն մի բոյլին՝ որ առանց ծանր կերպարանք առնելու, կարող են Դրանը ստիպել Հայաստանում պահանջուած ռէֆօրմները մտցնելու։ Թուրքական-փաշայի յանձնաժողովն աւարտում է այն ռէֆօրմների ծրագիրը, որ առաջարկել է Դուռը յունիսի 29-ի յայտագրով»։

Մեր կողմից այս միայն կ'աւելացնենք, որ անգլիական հաւատի աղբիւրներից բոլորովին չի երևում, թէ մարքիզ Սալսբիւրիի կառավարութիւնը հայկական խնդրի մէջ լորդ Ռոզբերիից պակաս եռանդ ցոյց կը տայ։ Այդ աղբիւրները միաբան պնդում են, որ մարքիզ Սալսբիւրին աւելի եռանդոտ և դրական քայլեր կը գործի՝ հայկական խնդիրը յաջողութեամբ լուծելու համար։ Եթէ առանձնապէս նոր նախարարապետը կամենայ Դրանը հաճոյանալ և հայկական խնդրին մեղմով վերաբերուել, այն ժամանակ պարլամէնտի մէջ նրան կ'ընդդիմադրէ Ռոզբերիի կուսակցութիւնը, որին կը միանան իւնիոնիստներն ու պահպանողականներից շատերը։ «Արձագանքի» ընթերցողներն անշուշտ չեն մոռացել, որ նոյն իսկ Ռոզբերիի կառավարութեան ժամանակ շատ պահպանողականներ՝ և այն էլ պարլամէնտի անդամներ մասնակցում էին հայկական միտինգներին։ Վերջապէս հայկական խնդրի առթիւ իրանց զօրաւոր ձայնը բարձրացրին անգլիական նշանաւոր պահպանողական թերթեր։

—

ԴՐԱՆ ԶԻՋՈՒՄՆԵՐԸ

Կ. Պոլսի «Politische Corresspondenz»-ին յուլիսի 12 թուով հեռագրում են.

Հայկական նահանգների համար Անգլիայի, Ռուսիայի և Ֆրանսիայի առաջադրած ռէֆօրմների առթիւ Օսմանեան կառավարութեան պատասխան-յայտագրի մի քանի կէտերի լրացուցիչ լուսաբանութիւնը այդ պետութեանց ներկայացուցիչներին կուղարկուի հաւանականաբար այսօր։ Դուռը նոր զիջումներ է անում և լուրջ պատրաստակամութիւն է յայտնում՝ հայկական խնդիրը հերթական դարձնել։

—

ՏԱՃԿԱԿԱՆ ՌԷՖՕՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

(«Daily News», յունիսի 20)

«Ռէֆորմների գործ.» հեռագիրը Կ. Պոլսից։

Երէկ Դուռը պաշտօնական կերպով հայտարարեց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպաններին, որ ամենակարճ ժամանակում դեսպանատներին կը հաղորդուի այն ռէֆօրմների ծրագիրը, որ սուլթանը մտադիր է մտցնել իր կայսրութեան ասիական նահանգներում։

—

«Daily Telegraphs» լրագրում և «Contemporary Rewiew» հանդիսում այս օրերս լոյս են տեսնել պ. Էմիլ Դիլօնի երկու ընդարձակ յօդուած, որոնց նիւթը հայկական խնդիրն է։

—

«TIMES»-ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

«Նով. Վր.» յատուկ թղթակիցը հեռագրում է Լօնդօնից.

„Times“-ը հաստատում է, որ մարքիզ Սալսբիւրին հայկական խնդրի վերաբերութեամբ հետևում է լորդ Ռոզբերիի քաղաքականութեան՝ երևան հանելով սակայն աւելի մեծ եռանդ»։

—

ՄԱԿԵԴՈՆԵԱՆ (միայն Մակեդոնեան) ԽՆԴԻՐԸ

Լօնդօնից «Նով. Վր.» լրագրին հեռագրում են յուլիսի 12 (24) թուով. «Անգլիական քաղաքական շրջաններում հաւատի են համարում „Daily News“-ի հաղորդած լուրը, թէ մակեդոնական (միայն մակեդոնական) խնդրի նկատմամբ համաձայնութիւն է կայացել Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Աւստրո-Հունգարիայի և Իտալիայի միջև։ Առաջնորդող գերը այդ խնդրում տուած է Աւստրիային։ Բրիտանական ներկայ կառավարութեան կողմնակիցները պնդում են, որ այդ համաձայնութիւնը Սալսբիւրիի աշխատութեանց շնորհիւն է կայացել։

Նոյնպէս լուր կայ, իբր թէ մարքիզ Սալսբիւրին աշխատում է այդ համաձայնութիւնը տարածել և Բոլգարական խնդրի վրայ՝ բառի նեղ իմաստով, և Գերմանիային ևս Աւստրիայի տեսակէտն ընդունել տալ։

—

ՍԱՍՈՒՆՑԻՔ ԼՕՆԴՕՆՈՒՄ

Անգլօ-Հայկական ընկերութեան անդամներից մէկը գրում է մեզ հետևեալը.

*Խեղճ սասունցիները միանգամայն գերի են դարձել միստեր Սալանի ձեռքի տակ։ Սասունցի կինն արդէն հիւանդացել է օտար երկրում։ Սէր Ջէմս Հօլի մեծ միտինգից յետոյ այդ սասունցոց ներկայութիւնը միանգամայն աւելորդ է։ Ով տեսել է նրանց զանազան ժողովներում, ուր քարշ է տալիս նրանց միստեր Սալանը, ի սրտէ կարեկից է եղել անշուշտ նրանց կրաւորական վիճակին։ Նրանք յոգնել են միտինգից միտինգ թափառելով և այլ ևս ոչ մի տպաւորութիւն չեն անում ժողովուրդի վրայ։ Անգլօ-հայկական ընկերութիւնը վաղուց որոշել է վերադարձնել նրանց Թիֆլիզ. տոմսակներն արդէն պատրաստ էին և Ընկերութիւնը որոշել էր տալ նրանց բացի ճանապարհածախից 50 ֆունտ ստերլինգ. սակայն միստեր Սալանն ամենակոպիտ կերպով մերժեց այդ առաջարկութիւնը և յանդգնաբար պատասխանեց միստեր Ստակլինին և նրա համակարծիք Լօնդօնի հայերին, թէ նրանց գործը չէ խառնուիլ սասունցոց վերադառնալու կամ չվերադառնալու խնդրի մէջ, թէ այդ իւր գիտենալու բանն է, թէ ինքն է բերել սասունցոց, ինքը՝ն էլ գիտէ թէ ուր կ'տանէ և երբ կ'տանէ, ուրիշների խորհրդին կարօտ չէ։ *) Այդպիսի պատասխան լսելով Անգլօ-հայկական ընկերութեան վարչութիւնը տպառնաց կտրել այն շաբաթական թոշակը, որ տալիս էր սասունցոց բնակարանի և ապրուստի համար։ Սալանը բանի տեղ չդրաւ սպառնալիքը, իսկ սասունցիք մնացել են նրա իշխանութեան տակ, որովհետև չեն համարձակվում նրա կամքի դէմ գնալ և կամ թէ հրապուրուած են նրա խոստումնե-*

*) Ընթերցողների ներողամտութիւնը խնդրելով ստիպուած ենք այստեղ առաջ բերել «Աղբիւրի» յատուկ «Ծարագի» մէջ սասունցիներին վերադարձնելու առթիւ տպագրուած մի ինսինուացիա, որ շօշափում է Անգլօ-հայկական ընկերութեան պատիւը։ Պ. Տիգրան Նազարեանցը իր արտասահմանի ճանապարհորդութիւնից եկած չեկած հրատարակել է հետեւեալը. «Ասում են (քաջութիւն ունեցէ՛ք, պարոն, ասել, թէ այդ ո՞վ է ասում) Անգլօ-Հայկական Ընկ. հրաժարուել է ոչ միայն ճանապարհածախս տալ, որ հայրենիք վերադառնան, այլ և „Times“ լրագրի խմբագրութեան յատուկ սասունցիներին նուիրած 30 անգլ. ոսկին էլ չէ տալիս այդ ընկերութիւնը նրանց»... դարձեալ...

ԳԵԼԻԷՏՕՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԿՐՏԻՉ Ա. ԽՐԻՄԵԱՆ

(«Ցերկվնի Վեստնիկ» № 23, թարգմ. և ծանօթ. «Արարատի» խմբագրութ.)

Մենք արդէն հաղորդել ենք Մկրտիչ Ա. Կաթուղիկոսի, կամ Հայոց Պարարքարի, մեր հիւսիսային մայրաքաղաքը ժամանելու լուրը։ Եւ պէտք է հայերին տալ իրենց արժանի պատիւը. նոքա գիտեն պատուել իրենց հոգևոր հովիւներին և մանաւանդ Հովուապետին, որի մէջ կենդրոնանում են նոցա թէ հոգևոր և թէ քաղաքական ակնկալութիւնները։ Կաթուղիկոսի ճանապարհորդութիւնը էջմիածնից, ուր նորա պատարքական աթոռն է գտնվում, ամբողջ Ռուսաստանով մինչև Պետերբուրգ՝ կարծես մի յաղթական գնացք էր, որովհետև բոլոր գլխաւոր քաղաքներում նորան զիմաւորում էին ամենահանդիսաւոր եղանակով։ Պետերբուրգում մանաւանդ նորա ընդունելութիւնը մի զորմանալի փառահեղ կերպարանք ունեցաւ։ Պետերբուրգի ամբողջ հայ գաղութը, որի ներկայացուցիչներից կան նաև բարձրագոյն վարչութեան մէջ, հաւաքուեցաւ Նիկոլայեւսկի երկաթուղու կայարանում մայիսի 25-ին՝ դիմաւորելու իւր Հայրապետին, և երբ կայարանից յառաջ ընթացաւ բազմաթիւ կառքերից բաղկացած գնացքը, որի մէջ աչքի էր ընկնում իւր հոյակապութեամբը կաթուղիկոսի իրեն բարձրը կառքը, որ վարում էին (?) գեղեցիկ կարմիր զգեստով շաթիրներ (կաւաս), և երբ գնացքի յետևից խռնուած՝ յառաջ շարժուեցաւ հետևակ բազմութիւնը՝ ամբողջ նեսկի պրոսպեկտը (փողոցը) մինչև հայոց եկեղեցին ներկայացնում էր մի խիստ կենդանի տեսարան, որին աւելի փառահեղութիւն էին տալիս Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Թեոդորովնայի ծննդեան օրուայ առթիւ ծածանուող դրօշակները։

Մինչև անգամ ռուսները դուրս էին թափուել իրենց տներից՝ տեսնելու Հայոց «պատրիարքին» և ակնածութեամբ գլուխ էին տալիս նորան։

Հայոց եկեղեցի հասնելով՝ Կաթուղիկոսը, սրին ընդունեցին զանգահարութեամբ և հոգևոր երգերով, աղօթք արեց և ապա դիմելով ժողովուած հասարակութեանը՝ քարոզ խօսեց, որի մէջ յայտնեց իւր ուրախութիւնը, որ բաղդ ունեցաւ թէպէտ և ծերութեան օրերում, տեսնելու Սպիտակ Թագաւորի հիւսիսային մայրաքաղաքը, և մի առանձին երջանկութիւն համարեց այն, որ իւր գալստեան օրը ռուս ժողովրեան օգոստափառ մօր՝ Թագուհի Կայսրուհու ծննդեան օրն էր։

Պետական բարձրագոյն պաշտօնեաների այցելութիւններն ընդունելով ու վերադարձնելով՝ Կաթուղիկոսը յաջորդ օրն իսկ իւր հետևորդների հետ միասին գնաց Պետրոպաւլովսկի տաճարը, ուր նորան ընդունեց տեղւոյն հոգևորականութիւնը, և եկեղեցականաց դասի հետ միասին հայկական հոգեհանդիստ կատարեց ի Տէր հանգուցեալ Խաղաղարար Թագաւորի համար։ Իրրև հոգևոր պաշտօնեայ նա այցելեց նաև հիւսիսային մայրաքաղաքի գլխաւոր հոգևոր հաստատութիւնը՝ Ալէքսանդրօ - Նևսկի մենաստանը և նրա սրբազան վանահօրը՝ ամենապատիւ Պալլադիոս մեծարգոյին։ Այս այցելութիւնը տեղի ունեցաւ յունիսի 2-ին, ցերեկուայ 12 ժամին։ Կաթուղիկոսը Այվազեան եպիսկոպոսի և տեղական հայ հոգևորականութեան ներկայացուցիչների ուղեկցութեամբ նախ գնաց ամենապատիւ միտրապոլիտ Պալլադիոսի մօտ և մեծ սիրով ընդունուեցան նորա կողմից։ Թէյ վայելելուց և ամենապատիւ միտրապոլիտին հրաժեշտ տալուց յետոյ՝ Կաթուղիկոսը հանդիսաւոր կարգով, շաթիրներն առաջից և մենաստանի տեղապահի ու դանձապահի, Եսայի և Արսենիոս վարդապետների (վերջինս առաջ ծառայել է Պոլսոյ միսսիոնում (առաքելութիւն) և այդ պատճառով քաջ ծանօթ է օրթոդոքս արևելքի պատրիարքների և հայկական եկեղեցու ներկայացուցիչների փոխադարձ յարաբերութեանց) ուղեկցութեամբ միջին ծառուղիով անցաւ ուղղակի տաճարը, որի գլխաւոր մուտքի առաջ կարմիր գորգ էր փռուած։ Տաճարը մտնելիս միտրանութիւնը դիմաւորեց կաթուղիկոսին Հոգեգալստեան «Օրհնեալ ես, Քրիստոս Աստուած մեր» և ս. Ալէքսանդր Նևացու շարականները երգելով, որից յետոյ Կաթողիկոսը բեմի բաց դռներովն անցաւ բեմն և համբուրեց ս. Աւետարանն ու սեղանը։ Բեմը դիտելուց յետոյ՝ նա դուրս եկաւ այնտեղից ու ամբիոնից (սեղանի առաջից) օրհնեց հաւաքուած ժողովրդին, որի միաբանութիւնը պատասխանեց Էյս պօլլա էտէ, դե՛սպօտտա (ի բազում ամս, Տէր)։

Այնուհետև անցնելով տաճարի աջ կողմը՝ Կաթուղիկոսը համբուրեց ս. Ալէքսանդր Նևացու դամբարանը և հարց ու փորձ արեց ս. Իշխանի նահատակութեանց մասին, որի կեանքի պատմութիւնը համառօտակի հաղորդեց նորան Արսենիոս վարդապետը։ Հոյակապ տաճարը դիտելուց յետոյ Կաթողիկոսը (հայերէն լեզուով) մի կարճառօտ ճառ խօսեց ներկայ եղողներին և անկեղծ շնորհակալութիւն յայտնեց (ինչպէս խօսքն ռուսերէն թարգմանեց նորա ճառը իւր շքախմբի հայ անդամներից մէկը) իրեն այնպիսի յարգանքով ընդունելու համար և իւր կողմից ամենքին էլ բարեմաղթութիւններ արեց։ Ներկայ եղողների թիւում, բացի միաբաններից և հասարակ ժողովրդից, կային հոգևոր ճեմարանի ուսուցչապետներից մի քանիսը, որոնք ուշադրութեամբ դիտում էին Կաթուղիկոսին ցոյց տուած ընդունելութեան բոլոր մանրամասնութիւնները։ Ս. Հոգւոյ եկեղեցին էլ այցելելով Կաթողիկոսը, ըստ երևոյթին գոհ ընդունելութիւնից, հեռացաւ Ալէքսանդր - Նևսկի մենաստանից։

Կաթուղիկոսի խիստ աչքի ընկնող անձնաւորութիւնը ամենքի վերայ գործեց մի վերին աստիճանի գեղեցիկ տպաւորութիւն, որ արտայայտուեցաւ այն ակնածութեամբ, որով վերաբերում էին նորան։ Եւ այդ տպաւորութիւնը աւելի ևս զօրաւոր է հանդիսանում շնորհիւ նորա կեանքի պատմութեան։ Կաթուղիկոսը իւր ժողովրդեան հարազատ զաւակն է։ Նա ծնաւ 1820 թ. մի համեստ արհեստաւորի ընտանիքում, տաճկական Հայաստանի Վան քաղաքում, և մատաղ հասակում բնաւ չէր պատրաստւում հոգևոր ծառայութեան համար. այդ ասպարէզը նա ընտրեց արդէն հասուն տարիքում, կնոջ և զաւակ մահից յետոյ։ Իւր կրօնական—բարոյական դաստիարակութիւնն այժմեան պատրիարքը պարտական է իւր հարազատ հօրեղբօրը, որ քաջ գիտէր հայոց լեզուն ու պատմութիւնը և աստուածաբանական գրականութեան լաւ տեղեակ էր։ Նա արհեստով ոսկերչանկ էր, և իւր եղբօրորդուն սովորեցնում էր իւր արհեստը, բայց ամենից աւելի ազդեցութիւն ունեցաւ նորա վերայ իւր ընտանութեան գրաւիչ յատկութիւններով։ Մեծանալով Վանայ լճի գծնեայ ափերի վրայ Մկրտիչ Խրիմեանը ճանապարհորդում, շատ սովորում է, այնպէս որ յիսնական թուականների կիսում ընդհանուրի ուշադրութիւնն է գրաւում որպէս պատմաբան, բանաստեղծ և հոգևոր իմաստասէր։ Տաճկաստանի քրիստոնէից թշուառ վիճակը, մանաւանդ Հայաստանի լեռներումն ու ձորերում, ուր մինչև այսօր անպատիժ թագաւորում են քրդերի աւազակաբարոյ ցեղերը, ամենից աւելի Խրիմեանի հոգածութեան առարկան է եղել։ Իւր բոլոր երկար կեանքը Թիւրքիայում՝ որպէս համեստ վանահայր և Կ. Պոլսոյ պատրիարք, որպէս Թուրքահայերի լիազօր ներկայացուցիչ Բերլինի վեհաժողովում՝ նա նուիրել է իւր հօտի վիճակի բարւոքման գործին։ Խորունկ և անկեղծ հաւատը և վառ պերճախօսութիւնը հընարաւոր էին դարձնում հայոց հովուապետի համար օսմանեան կայսրութեան զանազան կողմերում եկեղեցիներ, դպրոցներ և տպարաններ հիմնելու միջոցներ գտնելը։ Գծքաղդաբար տաճկական կառավարութիւնը՝ հովուապետի այս կամ այն տեղից հեռանալուց յետոյ, միշտ կարողանում էր ջնջել, ոչնչացել նորա բոլոր բարի ձեռնարկութիւնները։ 1869 թ. Խրիմեանն ընտրուեցաւ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարք և այն ժամանակն իսկ Դրան առաջ խնդիր յարոյց բարելաւելու տաճկահայերի սոսկալի դրութիւնը, մի խնդիր, որի վերաբերութեամբ մինչև այսօր էլ խօսք ու զրոյց է լինում։ Պատրիարքի պաշտօնում նա մնաց մինչև 1873 թ., զարմացնելով Կ. Պոլիսը իւր կեանքի անսովոր պարզութեամբ, աղքատ սեղանով ու հասարակ զգեստով, որ դուր չէր գալիս Թուրքաց մի քանի հայ պաշտօնեաների։ Պապականութեան ձգտումների ապօրինութիւնը գիտենալով՝ նա մերժեց Վատիկանի ժողովին մասնակցելու հրաւէրը, որ զումարուեցաւ պապի անսխալականութեան դաւանանքը հաստատելու համար։ 1879 թ., երբ վերջացաւ մեր վերջին պատերազմը Թիւրքիայի հետ, Փոքր Ասիայում սոսկալի սով սկսուեցաւ, որի հետևանքները զարհուրելի էին մանաւանդ այն պատճառով, որ Թիւրք կառավարութիւնը բնաւ սովը չէ որևէ միջոց ձեռք առնելու սովեալների վիճակը թեթևացնելու համար։ Գերապատիւ Խրիմեանը, որ այն ժամանակ Վանի առաջնորդ էր, հրաւէր կարդաց բոլոր հայերին և, իւր ժողովրդականութեան շնորհիւ, մեծ գումար հաւաքից, որով և կարողացաւ սովեալներին առանց կրօնի և ազգութեան խտրութեան օգնելու գործը կազմակերպել։ Մի բնութիւն իրողութիւն է պատմում նորա կենսագիրներից մէկը այդ սովի ժամանակաւանից։ Գերապատիւ Մկրտչի մօտ գալիս է սովեալ քրդերի մի խումբ և հաց է խնդրում, պատրաստականութիւն յայտնելով հայադաւանութիւն ընդունելու։

—Առէք հաց,—պատասխանեց նոցա սրբազանը, — իսկ հաւատափոխութեան

բով։ Սալանն ասել է նրանց թէ Ամերիկա պիտի տանէ նրանց և մեծ դումարներ հաւաքէ նրանց համար հայլն։ Արդայլի դուքսը պարզ յայտնել է թէ անհրաժեշտ է համարում սասունցոց վերադարձը դէպի Թիֆլիզ և միանգամայն աւելորդ ու մնասակար նրանց մնալը Եւրոպայում։ Գ. Դիլլօնը որոշակի և դրական կերպով յայտնեց թէ անպատճառ պէտք է յետ ուղարկել այդ խեղճերին և ազատել Սալանի ձեռքից. դոցա մնալը Լօնդոնում կարող է միայն մնասել հայկական գործին։

Հաւանական է սակայն որ չնայելով այս բոլորին Սալանը կը շարունակէ իւր խայտառակ գործերը յառաջ տանել, իւր օգտին ծառայեցնել սասունցոց տառապանքը և հայերի անունը կոտրել իւր անձնական շահերի համար։ Նա նամակներ է գրել Ամերիկայի հայերին, որ նրանք իրանց մօտ հրաւիրին սասունցոց և այնտեղի հայերի մէջ գժտութիւն է ծագել. լուրջ մարդիկ աւելորդ են համարում դրանց Ամերիկա գնալը, իսկ թեթևասոլիկները պահանջում են, որ գնան։»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յուլիսի 1-ից մինչև յունվարի 1-ը „Արձագանքին" բաժանորդ գրուողը պէտք է հատուցանէ 6 ռուբլի։

Նորին բարձր Սրբազնութիւն Թեմիս վիճակաւոր առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը Նորին Օծութիւն Վեհափառ Հայրապետին մինչև Թիֆլիզի թեմի սահմանն ուղեկցելով՝ ամսոյս 16-ին վերադարձել է Թիֆլիզ։

* * *

Մենք տպագրել էինք «Արձագանքում», որ մեր աշխատակից պ. Փիլիպպոս Վարդանեանը ուղևորուել է Լօնդոն իբրև մեր լրագրի թղթակից։ Հարկ ենք համարում հրապարակաւ յայտնել, որ այդ միանգամայն սխալ և անճիշդ է։ Ճշմարտութիւնն այն է, որ պ. Փ. Վարդանեանը ամառուայ արձակուրդներից օգտուելով գնացել է Լօնդոն անգլիական լեզուի մէջ կատարելագործուելու և անգղլիական կեանքը մի որոշ չափով ուսումնասիրելու։ Հազար ներողութիւն ենք խնդրում մեր պատուական բարեկամից «Արձագանքի» մէջ հաղորդած անհիմն տեղեկութեան համար։

* * *

Յուլիսի 25-ին Կովկասի զինուորական դատարանում կը քննուի յայտնի աւազակապետ Նարիի ընկերներից մէկի՝ Մուսա-բիբէգ Թաղիբէգ օղլու գործը. դա մեղադրւում է իշխանութեանը դիմադրութիւն ցոյց տալու և սպանութիւն գործելու համար։ Գործը կը քննուի ռազմական օրէնքով։

* * *

Յունիսի 7-ին և 10-ին պատահած սաստիկ հեղեղներից և կարկտից վնասուել էին Կարսի շրջանի Արդահան գաւառի մի քանի գիւղերի ցանքսերը։ Գեմրան, Դէսրգիս-Ուրան և Պալալօ գիւղերում բոլոր ցանքսերը ոչնչացած են. այդ գիւղերի վնասը 13,000 ռուբ. է հասնում։ Զուզլաուր, Զուանթել, Գումէ, Բաղել, և Դիգուր գիւղերի վնասը աւելի քիչ է եղել՝ ընդամենը 8700 ռուբլի։ Տեղական վարչութիւնը «Կարս» լրագրի ասելով կարգադրել է, որ վերջին հինգ գիւղի բնակիչներին անյապաղ նպաստ տրուի Արդահան գաւառի օժանդակիչ գանձարանի շրջանառու դրամագլխից՝ որքան հնարաւոր է։ Իսկ առաջին գիւղերի համար, որոնց վնասը մեծ է, Կարսի զինորական հանձնապետը դիմել է երկրիս կառավարչապետին, խնդրելով, որ վիճակի օժանդակիչ գանձարանների դրամագլխից ընդարձակ նպաստ տրուի գիւղացիներին՝ արտօնեալ պայմաններով, այսինքն՝ Գեմրան և Դէսրգիս-Ուրան գիւղերում իւրաքանչիւր ծխին 40 ռուբլի՝ 5 տարուայ ընթացքում քիչ քիչ վճարելու պայմանով, իսկ Պալալօ գիւղի իւրաքանչիւր ծխին 25 ռուբլի տալ, երէք տարուայ ընթացքում վճարելու պայմանով։

* * *

Թիֆլիզի քաղաքային խորհուրդը իր յուլիսի 17-ին արտաքոյ կարգի նիստին որոշեց, որ Վօղնեվենսկի եկեղեցուց մինչև Լօլաձէի տունը եղած փողոցը թէև քաղաքային գծի մէջ է գտնվում, բայց լինելով սիզիր Կօջօր-Մանդլիսեան ճանապարհի՝ նորա պահպանութեան մասին պէտք է հոգատարութիւն տանի։ Բայց այս ճանապարհորդութիւնը միևնոյն ժամանակ չէ կարող չազդել նաև օթոդոքս և Հայաստանեայց եկեղեցեաց փոխադարձ յարաբերութեանց խնդրի լուսաբանութեան վրայ։ Հայերն աւելի ու աւելի են ռուսաց պետութեան մի մասը կազմում և ինքը պատմութիւնն աւելի ու աւելի է մօտեցնում նոցա օրթոդոքս Ռուսաստանին։ Բայց նոքա միշտ մօտ են եղել նաև օրթոդոքս յոյն արևելքին։ Իրենց քրիստոնէական լուսաւորութիւնն ստանալով յոյներից՝ երկու եկեղեցիներին էլ սերբոց դասն ընդունուած ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով, հայերը մի կենդանի հոսանք մտցրին իւր ժամանակին յոյն արևելքում, որ արդէն սկսել էր դառամել։ Մինչև Քաղկեդոնի ժողովը 451 թ. Հայաստանեայց եկեղեցին ծաղկում և ամուր պահում էր ուղղափառութեան դրօշը և եռանդով մաքառում էր Նեստորի աղանդի դէմ։ Բայց երբ տեղի ունեցաւ Քաղկեդոնի ժողովը, որին դժբաղտաբար հայ եպիսկոպոսները չմասնակցեցին, այնտեղ սահմանուած ուղղափառ դաւանութիւնը Քրիստոսի երկու բնութեանց նկատմամբ, անճիշտ տեղեկութիւնների շնորհիւ, կասկածելի երևեցաւ։ Որովհետև նոցա լեզուում միայն մի (?) բառ կայ естество (բնութիւն) և лице (անձն) գաղափարների արտայայտութեան համար, ուստի և նոցա թուեցաւ թէ ժողովը դաւանելով երկու բնութիւն ի Քրիստոս, նոյն այդ որոշմամբ դաւանում է Նորանում երկու անձն։ Այդ պատճառով նոքա դաւանաբանական որոշումը անկանոն ճանաչեցին, մերժեցին ժողովը և հակուեցան Եւտիքէսի միաբնակութեան վարդապետութեան կողմը։ Այս թիւրիմացութեան պատճառով կտրելով իւր յարաբերութիւնները (որոնց լարմանը նպաստեցին և քաղաքական հանգամանքները) յունական եկեղեցու հետ, Հայաստանեայց եկեղեցին իւր պատմական զարգացման նոր շրջանը մտաւ և դժբաղդաբար յառաջ գնաց արդէն միաբնակութեան ճանապարհով։

Նորա հիմնական դաւանական գիրքն այժմ մի հին հաւատամք է (որ վերագրուում է,—հարկաւ առանց օրինաւոր պատմական քննադատութեան,—ս. Գրիգոր Լուսաւորչին), որի մէջ ի միջի այլոց ասուած է Քրիստոսի մասին թէ նա «ունէր մի անձն, մի դէմ և միաւորեալ էր ի մի բնութիւն»,*—ուր պարզ նշմարուում է միաբնակութիւն։ Սակայն Արևելքի հետագայում յայտնի զիտական Նիլը իւր «Հայաստանեայց եկեղեցու ուղղափառ համարուելու ձգտումը» ճառի մէջ այն կարծիքն է յայտնում, թէ Հայաստանեայց եկեղեցու աստուածաբանները բոլորովին հաշտեցնում են այդ ուսումը առհասարակ արևելեան եկեղեցու վարդապետութեան հետ, և յիրաւի նոքա ամենայն դէպքում աշխատում են ցոյց տալ թէ իրենց դաւանաբանական վարդապետութիւնը բնաւ չէ տարբերուում ուղղափառ արևելքի վարդապետութիւնից։ Եւ չէ կարելի չասել, որ նոցա հին եկեղեցին իւր բոլոր կազմութիւնն ու ոգովը մօտ է յոյն եկեղեցուն և կարող է իւր հնութեանց զինարանից զօրաւոր օգնութիւն հասցնել թէ պապականութեան ապօրինի ոստնգութեանց ու նորամուտ ուսմանց և թէ բողոքականութեան մոլորութեանց դէմ մաքառելու գործին։ Բայց նոցա միջի մեծ անջրպետն այն աներկբայելի և սրխուր իրողութիւնն է, որ Հայաստանեայց եկեղեցին հօթն տիեզերական ժողովների եկեղեցի չէ, որովհետև նա ընդունում է միայն առաջին երեք ժողովները, որ և ուսուցանում է ուղղակի և վճռապէս իւր վարդապետարաններում։ Այս իրողութիւնն ահա նախ և առաջ և գլխաւորապէս պէտք է աչքի առաջ ունենալ Հայաստանեայց և օրթոդոքս եկեղեցեաց մօտենալու և փոխադարձ յարաբերութեանց մասին մտածելիս, և չէ կարելի չցանկալ, որ երկու եկեղեցիների ներկայացուցիչ աստուածաբաններն էլ աւելի մանրամասնօրէն զբաղուէին այս առաջնակարգ կարևորութիւն ունեցող միջեկեղեցական խնդրի քննութեամբ։ *)

* * *

Ընթերցողը Կ. Պոլսի մեր թղթակցի նամակից կը տեսնի, որ ամենապատիւ Մատթէոս Պատրիարքը պատժել է այն եպիսկոպոսներին, որոնք Սսոյ կաթուղիկոսի ընտրութեան վեմ բողոք էին տուել Դրանը։ Պատրիարքը հօր այդ վարմունքն աւելի քան գովելի է։ Այն ըմբոստ հոգեորականը, որ ներքին, հոգեոր—ազգային գործերի վերաբերմամբ իւր մեծին ընդդիմանում է, նրան թողնում և ոստիկանութեան գաներն է բերվում, ոչ միայն փիլոնապուրկ պէտք է լինի, այլ և մի բան էլ աւելի։ Անդարձ գնացել են այն ժամանակները, երբ խնայելով և ներողամտութեամբ (իբր թէ հեռատեսութեամբ) էին յանդիմանում չարութիւնը։ Մեր օրերում կարգը և իւր հեղինակութիւնը պահպանել ցանկացող իշխանաւորը ներողամտութեամբ ոչինչ չի կարող անել։ Ցանկացողին և ըմբոստին խարազանով միայն կարելի է լռեցնել։

* * *

† Ամսոյս 17-ին, վախճանուեցաւ իր 46 ամեայ հասակում «Մշակ» լրագրի հրատարակիչ Մարիամ Մելիք-Աղամալեանը։ Հանգուցեալը «Մշակի» հրատարակութեան իրաւունքը ինչպէս և իր բոլոր շարժական կայքը կտակել է պ. Անդրէաս Արծրունուն։ Գտակակատարներն են պ. պ. Ցէր-Մարկոսեանը և Մալումեանը։ «Մշակի» խմբագրութիւնը հանգուցեալին նուիրած յօդուածում հաստատում է թէ Գ. Արծրունու մահուանից յետոյ նա «ներկայանում էր իբրև ամենահաւատարիմ պահպանող արծրունական աւանդութիւնների», թէ «Մշակի» երկարատև գոյութեան միջոցին հանգուցեալի գործակցութիւնը մեծ դեր է խաղացել այդ լրագրի զարգացման գործում, որին շատ լաւ տեղեակ են «Մշակի» «գործերին մօտիկ անձնաւորութիւնները»։

«Մշակի» ներկայ խնբագրութիւնը, շարունակում են յօդուած կազմողները, հանգուցեալի մէջ տեսնում էր ոչ միայն լրագրի հրատարակչի այլ և ամենամօտ խորհրդատուի՝ բոլոր խոշոր խնդիրներում։ Նրա ուշադիր վերաբերմունքը դէպի խմբագրութեան ամեն մի գործը, նրա անխոնջ հսկողութիւնը լրագրին վերաբերեալ գործերին—նրանից ստեղծել էին (Աստուած իմ, այսպէս էլ լիցու կը լինի՝) մի արթուն պահապան, որ գիշեր ցերեկ (?) «Մշակի» անհոգ առաջադիմութեան մասին էր հոգում»։

* * *

Վարշավի ընակիչների թիւը 1895 թուի սկզբին եղել է 571,300 մարդ, որոնք ըստ դաւանութեանց բաժանվում էին հետևեալ կերպով՝ կաթոլիկ—30,7674 մ., հրէայ—120,300, օրթոդոքս—20,871, բողոքական—16,525, մահմեդական 254, հայ—229, ռուս աղանդաւոր—113 և կարայիմ—2 մարդ։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

† ՀԱՅՆԵՐԻՒ ԳՆԱՑՍ

Յուլիսի 10-ին վախճանուել է Բերլինում յայտնի զիտնական և քաղաքական գործիչ Հայնրիխ Ռուդոլֆ Գնայստը։ Նա ծնուել է 1816 թուին Բերլինում, ուր և ստացել է իր կրթութիւնը և 1839-ին տեղական համալսարանում պրիվատ-դոցենտի պաշտօն է ստանձնել։

Այդ ժամանակից փոքր ինչ առաջ նա մի ճանապարհորդութիւն կատարեց Իտալիայում, Ֆրանսիայում և Անգլիայում. վերջին երկու երկրներում նա յաճախ ճանապարհորդել է և յետագայում։ 1844-ին Գնայստը ծառայում էր նաև դատարանում, բայց թողեց այդ ասպարէզը 1850-ին, որպէս զի իրեն բացառապէս ուսուցման և գիտական աշխատութիւնների նուիրէ։ Ամենամեծ հռչակը Գնայստը ստացաւ Անգլիայի պետական կազմակերպութեան և օրէնսդրութեան վերաբերեալ իր հետազօտութիւններով։ Այս երկերից պէտք է յիշենք այստեղ հետեւեալները. „Adel und Ritterstand in England" (1853 թ.), „Das heütige englische Verfassungs—und Verwaltungsrecht" (1857—63), Buget und Gesetz nach dem constitutionellen Staatsrecht Englands" (1867), „Stadtverwaltung der City von London", „Englische Verfassungsgeschichte„ (1882), „Das englische Parlament" (1886)։

Բացի այս աշխատասիրութիւնները, որոնք գրաւեցին գիտնական աշխարհի ամենամեծ ուշադրութիւնը, հանգուցեալը մի ամբողջ շարք շարադրութիւններ է յօրինել, որոնք գրուած են Գերմանիայի ժամանակակից գանազան քաղաքական խնդիրների աւելով և ուր հեղինակը դառնում է միշտ դէպի անգղիական հաստատութիւնները։ Սոցանից յիշենք՝ «Rechtsstaat», „Gesetz und Budget" և այլն և այլն։ Գնայստի քաղաքական գործունէութիւնն սկսուեցաւ 1858-ին, երբ նա պրուսական պատգամաւորների ժողովի անդամ ընտրուեցաւ։ Յետոյ նա ընտրուեցաւ նաև ռայխստագի անդամ։ 1862—1886-ի ընդհարման միջոցին նա աչքի ընկնող դիրք բռնեց ազատամիտ ընդդիմադիրների շարքում։ Kultur - kampf-ի միջոցին Գնայստը անցաւ ազգութեան կողմը կղերականների դէմ։ Վերջին ժամանակները Գնայստը Central-Verein für das Wohl der arbeitenden Klassen ընկերութեան նախագահ էր և այս դաշնակցութեան օրգան „Der Arbeiterfreund" թերթի խմբագիր։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

XI

9 Յուլիսի 1895.

Երեկ Կ. Պոլսոյ բոլոր եկեղեցիներում կարդացուեց Սրբազան Պատրիարքի կոնդակը, որով յայտարարվում է թէ պաշտօնակից են լինում Կիլիկիոյ երեք եպիսկոպոսները՝ Աբրահամ, Նիկողայոս և Յովհաննէս, և Կիրակոս վարդապետը, որոնք դիմելով տաճիկ կառավարութեան և նրա աջակցութիւնը գտնելով կամեցան անվաւեր համարել տալ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնները։

Պատրիարքական այդ կոնդակը, որի պատճէնն ուղարկում եմ, մի մեծ դէմոնստրացիա է տաճկի խորամանկ քաղաքականութեան դէմ և այժմեան Պատրիարքի ամենատարժանաւոր և համարձակ գործերից մէկն է։ Այդ կոնդակով նա հաստատում է և հասկացնում է տաճիկ կառավարութեան որ հայ եպիսկոպոսները և վարդապետները հայ եկեղեցու պաշտօնեաներ են և ոչ թէ տաճիկ կառավարութեան գործակալներ, և թէ նրանք պիտի ճանաչեն Պատրիարքարանի, Ազգային Ժողովի իրաւասութիւնը և ոչ թէ Բ. Դրան։ Կառավարութեան կողմից ամենայն հնար գործ էր դրուել, որպէս զի այդ կոնդակը չկարդացուի, բայց նա կարդացուեց և իւր արժանի տպաւորութիւն արաւ։ Սակայն եպիսկոպոսները դեռ չեն վերադարձել և անշուշտ կառավարութիւնն ամեն ջանք է գործ կը դնի որ նրանք չվերադառնան. բայց այդ ևս ոչ մի օգուտ չի բերիլ նրան, որովհետև Կիլիկիայից հասած հաստատ լուրերին նայելով այդ եպիսկոպոսներին այնտեղ համբոյրով չեն ընդունիլ... Վերջապէս տաճկական այս նոր թաղարն էլ Սրբազան Պատրիարքի վճռական քայլով փառաւորապէս խորտակուց։

Հայկական ուէֆօրմների ծրագրի մերժելն այնքան անսպասելի էր եւրոպական պետութեանց ներկայացուցիչների համար, որ առ բոպէ մի փոքր չփոթութեան պատճառ եղաւ և լռութիւն տիրեց։ Ջատերը բոլորովին յուսահատվում էին և հարցնում, թէ ինչ կը լինի այս ամենի վերջը։ Պէտք է Պօլսում լինել իմանալու համար թէ որքան ծանր է սպասողական դիրքի մէջ լինել այս օրերում։ Ուստի ես վճռեցի յատուկ տեսակցութիւն ունենալ եւրոպական դիպլոմատիայի այստեղի ներկայացուցիչներից մէկի հետ իմանալու համար թէ ինչպէս են նայում դրանք այս տրպլի-կոմեդիայի վրայ, որ ըստ երևոյթին կատարվում է հայ ազգի գլխին։—«Դուք գիտէք թէ այս բոպէին ինչեր են կատարվում Հայաստանում, մանրաման տեղեկութիւններ ունիք այն կեղեքումների, քանդարարութիւնների և սպանութիւնների մասին, որ տեղի են ունենում բոլոր հայաբնակ գաւառներում, գիտէք որ մինչև անգամ այստեղից ուղարկուած հացը խլում են քաղցից տանջուող հայերի բերանից. այդ բոլորի հետ միասին տաճիկ կառավարութիւնը մերժեց ուէֆօրմների ծրագիրը. ուրեմն ինչ պիտի լինի այս բոլորի վերջը, էլ որտեղ է քրիստոնէութիւնը, որտեղ է մարդասիրութիւնը և նրա ոյժը»։ Իմ այդ խօսքերից յետոյ ես ամբողջ կէս ժամ միայն լսում էի խօսակցիս և ժամանակ չէի ունենում նրա հարցումն առաջարկելու։ Նա անկեղծ վրդովուած էր և զգացուած. ես գործ ունէի ոչ միայն դիպլոմատի հետ, այլ և անկեղծ զգացուած մարդու և քրիստոնէի հետ։—«Դուք անշուշտ գիտէք Ձեր ազգի պատմութիւնն—ասաց նա—ես ես մասամբ ուսումնասիրել եմ այդ պատմութիւնը և համոզուած եմ որ նրա միջի սխալ երեսների պատճառը Եւրոպան չէ։ Եւրոպան այժմ պարտական է համարվում հայերին և ամեն անգամ այդ պարտականութեան համար խօսք լինելուս յիշվում է այն հացը, որ հայերը տուել են բախտախնդիր խաչակիրներին. բայց կարծէք թէ նոյն հացը չէ տուել և նոյն ընդունելութիւնը չէ արել հայը Թէմիրլանների և Ալիսալանների վայրենի զօրքերին, որովհետև նրա համար երկուսն էլ նոյնն էին, նա երկուսից էլ վախենում էր, երկուսին ևս տալիս էր իր հացը իր կեանքն ազատելու համար։ Այս գրութիւնն անկասկած ցաւալի է. բայց ինչ մեղաւոր է Եւրոպան, որ ճակատի քրտինքով իր համար մի քաղաքական և անտեսական վիճակ է ստեղծել և այն էլ դեռ ոչ բոլորովին կատարելագործուած։

«Հայկական խնդրի լուծումն սպասում էք անսպատճառ Եւրոպայից։ Բայց ինչու։ Եւ մթթէ այդ բնական է, կամ արդարութիւն կը լինի այդ։ Ճշմարիտ անդամնելի կլինի Եւրոպան, եթէ նա քրիստոնէական կարեկցութիւն ցոյց չտայ հայերին, բայց լաւ նայեցէք և կըտեսնէք որ այդ քրիստոնէական կարեկցութիւնը լիուլի տրվում է։ Մի տարի առաջ պիտի Կ. Պոլսում լինէիք որ հասկանայիք թէ ինչ զանազանութիւն կայ հայերի այն ժամանակուան և այժմեան վիճակի մէջ։ Դուք անշուշտ համոզուած էք որ տաճիկը հային ոչ թէ ինքնավարութիւն, այլ չնչին արտօնութիւններ իսկ, այլ նոյն իսկ ամենատարրական օրէնական իրաւունքներ տալու ոչ մի տրամադրութիւն չունի. բայց նա ստիպուեց թէպէտ տալ որ Պատրիարքական գահը բարձրանայ Իզմիրլեանի պէս խելացի և անկեղծ հայրենասէր մարդը. նա ստիպուեց ոչ միայն Եւրոպայի ճնշման ենթարկուել, այլ և իր կամքի հակառակ նրա երկիրը մտան եւրոպական ընիշներ և ամենայն խրատ է այդպիսի բառերով և որքան շատ էին մեր հայրերի մէջ յունական լեզուին քաջ հմուտ, Քաղկեդոնի ժողովի որուշումները ամենայն ճշգրտութեամբ թարգմանելու ընդունակ մարդիկ։ *) Եթէ նոքա այդ որոշումները մերժել են և պատուիրել են քարոզել՝ մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացեալ եւ ոչ երկուս բնութիւնս, այդ եղել է ոչ թէ «Եւտիքէսի միաբնակութեան» հետևելով, այլ հաւատարիմ մնալով այն դաւանութեան, որ ունէր մի և ընդհանրական եկեղեցին Քաղկեդոնի ժողովի պատճառով զանազան մասերի բաժանուելուց առաջ։ Մեզ դժուար չէ բազմաթիւ օրինակներով ապացուցանել, որ «մի անձն, մի դէմ, և միաւորեալ մի բնութիւն» խօսքերը՝ առնուած են մեր եկեղեցոյ մէջ Հրաժարիմք-ից կից գործածուող հաւատոյ հանգանակից, որ սակայն ոչ մեր եկեղեցոյ «հիմնական դաւանական գիրքն է» և ոչ էլ «վերագրուում է ս. Գրիգոր Լուսաւորչին»—ինչպէս նաև մեր իսկական հայերից գործածուած նման գրքերում, կէս առ կէս համաձայն են ուղղափառութեան ախոյեան ս. Կիւրեղ Աղեքսանդրացու վարդապետութեան և ճշգրիտ արտայայտութիւն Եվեսոսի ս. ժողովում ընդհանրական եկեղեցոյ, Նեստորի մոլորութեան հակառակ, ի Քրիստոս դաւանած հաւատքի։ Պատմութեան արդի անկողմնապահ քննադատութիւնը հաստատուն փաստերով ապացուցել է, որ Քաղկեդոնի ժողովի ընդունած երկու բնութեան ուսումը արևելեան եկեղեցու մասին կը մտածենք յետոյ, երբ սովը վերջանայ։

Վերջին տարիները, նախ քան իւր ընտրութիւնն ի գահ ս. Գրիգորի, կաթուղիկոսն ապրում էր Երուսաղէմում, ակամայ հանգստեան մատնուած թիւրք կառավարութեան կասկածոտութեան շնորհիւ, որ խիստ մախանօք էր նայում հայերի անսահման սիրոյն առ իրենց հովիւը։ Ամենից քիչ նա պատրիարքական աթոռի վրայ էր մտածում, երբ ընտրուեցաւ 1893 թուականի 5 մայիսի Էջմիածնի ժողովով։ Բ. Դուռը կարող էր միայն ձգձգել նորա հաստատութիւնը կաթուղիկոսի պաշտօնում, բայց վերջ ի վերջոյ նա ստիպուած եղաւ ճանաչել այդ ընտրութիւնը, և 1893 թ. յունիսի 3-ին հրատարակուեցաւ Բարձրագոյն հրովարտակ Մկրտիչ արքեպիսկոպոսի Ամենայն Հայոց Կաթուղիկոս հաստատելու մասին։ Ռուսաստան ժամանելու օրուանից Կաթուղիկոսի համար ամենից աւելի հոգածութեան առարկայ է դարձել այն թրքահայերի վիճակը, որոնք փախել են իրենց հայրենիքից մեր սահմանները սովի և ապա թիւրքաց գազանութեանց ու բռնութեանց երեսից, որ արդէն դիպլոմատիական ներգործութեան առարկայ են դարձել։ Բազմաթիւ քաղցած, պատառոտած շորերով, հիւանդ գաղթական տղամարդիկ, կանայք և երեխաներ առաւօտուանից մինչև գիշեր լցուում են Կաթուղիկոսի բնակավայր վանքը, այնպէս, որ Կաթուղիկոսն ստիպուած եղաւ հանգանակութիւն բանալու թշլատուութիւն խնդրել, որպէս զի կարողանայ դէթ փոքր ի շատէ թեթևացնել թշուառ փախստականների վիճակը։

Ընայելով իւր հօթանասուն և հինգ ամեայ հասակին, Կաթուղիկոսը բոլորովին առոյգ է և կարող է շարունակ տասը ժամ ձիու վրայ անցկացնել։ Եկեղեցական իշխանաւորի կեանքի պայմաններն արևելքում, ուր հօսը կարելի է այցելել միայն ձիով, կեանքի համար վանդաւոր հանգամանքներում, կաթուղիկոսին, ինչպէս և ուրիշ շատ հոգևորականների զարձրել են անխոնջ ձի հեծնող և վարպետ հրացան արձակող։

Մկրտիչ Կաթուղիկոսի այս ճանապարհորդութեան նպատակը, ինչպէս հաղորդում են լրագիրները, Թագաւոր Կայսեր շնորհաւորելն է, որ սովորաբար անում են էջմիածնի պատրիարքները Ռուսոյ Վեհապետների վերաբերութեամբ, սոցա իրեն հայրենական գահը բարձրանալուց յետոյ։ Բայց այս ճանապարհորդութիւնը միևնոյն ժամանակ չէ կարող չազդել նաև օթոդոքս և Հայաստանեայց եկեղեցեաց փոխադարձ յարաբերութեանց խնդրի լուսաբանութեան վրայ։ Հայերն աւելի ու աւելի են ռուսաց պետութեան մի մասը կազմում և ինքը պատմութիւնն աւելի ու աւելի է մօտեցնում նոցա օրթոդոքս Ռուսաստանին։ Բայց նոքա միշտ մօտ են եղել նաև օրթոդոքս յոյն արևելքին։ Իրենց քրիստոնէական լուսաւորութիւնն ստանալով յոյներից՝ երկու եկեղեցիներին էլ սերբոց դասն ընդունուած ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով, հայերը մի կենդանի հոսանք մտցրին իւր ժամանակին յոյն արևելքում, որ արդէն սկսել էր դառամել։ Մինչև Քաղկեդոնի ժողովը 451 թ. Հայաստանեայց եկեղեցին ծաղկում և ամուր պահում էր ուղղափառութեան դրօշը և եռանդով մաքառում էր Նեստորի աղանդի դէմ։ Բայց երբ տեղի ունեցաւ Քաղկեդոնի ժողովը, որին դժբաղտաբար հայ եպիսկոպոսները չմասնակցեցին, այնտեղ սահմանուած ուղղափառ դաւանութիւնը Քրիստոսի երկու բնութեանց նկատմամբ, անճիշտ տեղեկութիւնների շնորհիւ, կասկածելի երևեցաւ։ Որովհետև նոցա լեզուում միայն մի (?) բառ կայ естество (բնութիւն) և лице (անձն) գաղափարների արտայայտութեան համար, ուստի և նոցա թուեցաւ թէ ժողովը դաւանելով երկու բնութիւն ի Քրիստոս, նոյն այդ որոշմամբ դաւանում է Նորանում երկու անձն։ Այդ պատճառով նոքա դաւանաբանական որոշումը անկանոն ճանաչեցին, մերժեցին ժողովը և հակուեցան Եւտիքէսի միաբնակութեան վարդապետութեան կողմը։ Այս թիւրիմացութեան պատճառով կտրելով իւր յարաբերութիւնները (որոնց լարմանը նպաստեցին և քաղաքական հանգամանքները) յունական եկեղեցու հետ, Հայաստանեայց եկեղեցին իւր պատմական զարգացման նոր շրջանը մտաւ և դժբաղդաբար յառաջ գնաց արդէն միաբնակութեան ճանապարհով։

Նորա հիմնական դաւանական գիրքն այժմ մի հին հաւատամք է (որ վերագրուում է,—հարկաւ առանց օրինաւոր պատմական քննադատութեան,—ս. Գրիգոր Լուսաւորչին), որի մէջ ի միջի այլոց ասուած է Քրիստոսի մասին թէ նա «ունէր մի անձն, մի դէմ և միաւորեալ էր ի մի բնութիւն»,*—ուր պարզ նշմարուում է միաբնակութիւն։ Սակայն Արևելքի հետագայում յայտնի զիտնական Նիլը իւր «Հայաստանեայց եկեղեցու ուղղափառ համարուելու ձգտումը» ճառի մէջ այն կարծիքն է յայտնում, թէ Հայաստանեայց եկեղեցու աստուածաբանները բոլորովին հաշտեցնում են այդ ուսումը առհասարակ արևելեան եկեղեցու վարդապետութեան հետ, և յիրաւի նոքա ամենայն դէպքում աշխատում են ցոյց տալ թէ իրենց դաւանաբանական վարդապետութիւնը բնաւ չէ տարբերուում ուղղափառ արևելքի վարդապետութիւնից։ Եւ չէ կարելի չասել, որ նոցա հին եկեղեցին իւր բոլոր կազմութիւնն ու ոգովը մօտ է յոյն եկեղեցուն և կարող է իւր հնութեանց զինարանից զօրաւոր օգնութիւն հասցնել թէ պապականութեան ապօրինի ոստնգութեանց ու նորամուտ ուսմանց և թէ բողոքականութեան մոլորութեանց դէմ մաքառելու գործին։ Բայց նոցա միջի մեծ անջրպետն այն աներկբայելի և սրխուր իրողութիւնն է, որ Հայաստանեայց եկեղեցին հօթն տիեզերական ժողովների եկեղեցի չէ, որովհետև նա ընդունում է միայն առաջին երեք ժողովները, որ և ուսուցանում է ուղղակի և վճռապէս իւր վարդապետարաններում։ Այս իրողութիւնն ահա նախ և առաջ և գլխաւորապէս պէտք է աչքի առաջ ունենալ Հայաստանեայց և օրթոդոքս եկեղեցեաց մօտենալու և փոխադարձ յարաբերութեանց մասին մտածելիս, և չէ կարելի չցանկալ, որ երկու եկեղեցիների ներկայացուցիչ աստուածաբաններն էլ աւելի մանրամասնօրէն զբաղուէին այս առաջնակարգ կարևորութիւն ունեցող միջեկեղեցական խնդրի քննութեամբ։ *)

Յայտնելով հանդերձ մեր բոլոր գոհունակութիւնը այս ջերմ համակրանքի համար, որ արտայայտուած է ներկայ յօդուածի մէջ դէպի մեր Սրբազնագոյն Հայրապետը, չենք կարող ի ցաւ սրտի մատնացոյց չանել այն թիւր կարծիքների վերայ, որոնց ենթակայ է այստեղ Հայաստանեայց ս. եկեղեցոյ դաւանութիւնը։ Պէտք է խոստովանել, թէ մասամբ մենք Հայերս ենք մեղաւոր, որ օտարները այսպիսի մի կարծիք են կազմել և ամեն դէպքում պարբերաբար կրկնում են։ Այո, եղել են մեր մէջ մարդիկ, որոնք աշխատել են ցոյց տալ, իբրը թէ մեր և յունական եկեղեցոյ դաւանութեան մէջ ոչ մի էական խտրութիւն չկայ, իբր թէ տարբերութիւնը միայն արտաքին հանգամանքների, բառերի մէջ է. մինչդեռ իրողութիւնն այն է, որ մենք յատկապէս Յունաց եկեղեցու դէմ երկար դարերի ընթացքում կեանքի և մահու կռիւ ենք վարել, և որ այդպիսի կռիւ յառաջ կարող էր գալ միայն այն ժամանակ, երբ մէջտեղ կեանքի և մահու խնդիր կար և ոչ այդ՝ թէ և հին, բայց միանգամայն հնարովի, հանգամանքը, որով Հայոց լեզուի մէջ մի հատ բառի պակաս լինելը Քաղկեդոնի ժողովի մասին սխալ գաղափարը կազմելու պատճառն է համարուում։ Ցաւալի է, թէ մեր գրաբար լեզուն որքան հարուստ է այդպիսի բառերով և որքան շատ էին մեր հայրերի մէջ յունական լեզուին քաջ հմուտ, Քաղկեդոնի ժողովի որուշումները ամենայն ճշգրտութեամբ թարգմանելու ընդունակ մարդիկ։ *) Եթէ նոքա այդ որոշումները մերժել են և պատուիրել են քարոզել՝ մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացեալ եւ ոչ երկուս բնութիւնս, այդ եղել է ոչ թէ «Եւտիքէսի միաբնակութեան» հետևելով, այլ հաւատարիմ մնալով այն դաւանութեան, որ ունէր մի և ընդհանրական եկեղեցին Քաղկեդոնի ժողովի պատճառով զանազան մասերի բաժանուելուց առաջ։ Մեզ դժուար չէ բազմաթիւ օրինակներով ապացուցանել, որ «մի անձն, մի դէմ, և միաւորեալ մի բնութիւն» խօսքերը՝ առնուած են մեր եկեղեցոյ մէջ Հրաժարիմք-ից կից գործածուող հաւատոյ հանգանակից, որ սակայն ոչ մեր եկեղեցոյ «հիմնական դաւանական գիրքն է» և ոչ էլ «վերագրուում է ս. Գրիգոր Լուսաւորչին»—ինչպէս նաև մեր իսկական հայերից գործածուած նման գրքերում, կէս առ կէս համաձայն են ուղղափառութեան ախոյեան ս. Կիւրեղ Աղեքսանդրացու վարդապետութեան և ճշգրիտ արտայայտութիւն Եվեսոսի ս. ժողովում ընդհանրական եկեղեցոյ, Նեստորի մոլորութեան հակառակ, ի Քրիստոս դաւանած հաւատքի։ Պատմութեան արդի անկողմնապահ քննադատութիւնը հաստատուն փաստերով ապացուցել է, որ Քաղկեդոնի ժողովի ընդունած երկու բնութեան ուսումը արևելեան եկեղեցու

Neale, Hist. of East. Church, II. 1078.

*) Իսկականն է. «մի անձն, մի դէմ, եւ միաւորեալ մի բնութիւն»։

*) Ռուսաց օրթոդոքս գիտութիւնն արդէն այս կողմից մի կարեւոր աշխատութիւն հրատարակ է հանել, այն է՝ Պետերբուրգի հոգեւոր ճեմարանի ուսուցչապետ Ի. Ե. Տրոյիցկու դոկտորութեան շարադրութիւնը, որի նիւթն է Ներսիսի հայոց գաւանութիւնը. տես. „Изложеніе вѣры церкви Армянскія, начертанное Нерсесомъ, коѳоликосомъ армянскимъ, по требованію боголюбиваго государя грековъ Мануила„. Историко дормат. изслѣдованіе И. Троицкаго Спб. .1875 г.

*) Պատմութիւնից յայտնի է, որ այդ աղանդաւորը հետևողներ չէ թողել և որ ո՛չ միայն Հայոց, այլ նա և Միաբանակ կոչուած եկեղեցիները նզովում են նորան։

տութեամբ քննութեան և կրիտիկայի ենթարկեցին նրա կառավարչական սխալները. հայ մահապարտներին տաճիկը չհամարձակուեց կախել, հայ բանտարկեալների մեծ մասն արձակեց և այսօր տարտաղով տեսնում է, որ անգղիական մամուլը և ազգը միաբերան պահանջում են տաճկական Հայաստանի ազատութիւնը, իսկ եւրոպական դիպլոմատիան պահանջում է ռէֆորմների ծրագրի իրագործումն։ Զեզ հետ միասին չենք կարող ուրանալ անշուշտ որ անգղիական ազգը իր մամուլի միջոցով այս խնդրում իր քրիստոնէական պարտքը կատարեց և նրա մի տարուան քրտնաջան աշխատանքից ծնեց այն մեմորանդումը, որի հետ խաղում է այսօր տաճիկը, բայց որից խուսափելու ոչ մի ելք չունի եւ չէ՛ կարող ունենալ։ Անշուշտ այդ բոլորի սաղմը պիտի փնտռել այն անմեղ արեան մէջ, որ թափուեց Սասունում. բայց չէ՞ որ Սասունցիք հայեր են և պիտի աւելի վայելէին իրենց արենակիցների քան ուրիշների համակրութիւնը... Իսկ ինչով արտայայտուեց այդ համակրութիւնը և կամ ինչով է այժմ արտայայտուում։ Կասէք երևի որ անձնուէր հայերը շատ կան. բայց ես ձեզ կասեմ որ ամբողջ անգղիական ազգը հայկական խնդրում միաձայն բողոք բարձրացրաւ. իսկ ձեր ազգը։

«Եւրոպան պարտաւոր է, այո, պարտաւոր է պաշտպանել քրիստոնեային և նրանց ապահովութեան վրայ հսկել. բայց մի քիչ աւելի լայն սիրտ լինինք. ինչու՞ պէտք է Եւրոպան մարդկութեան թշնամի լինի և ինչու նա պէտք է կրթի նաև մահմեդական տարրը։ Եւրոպան կարող է և պէտք է պահանջի որ քրիստոնեայ հայերի կեանքն ապահովուի, բայց մթթէ ծիծաղելի չէ մատծել որ Եւրոպան գիւղացիական զգացմունք տեսնի այնտեղ, ուր իսկապէս չկայ...Ազատութիւն փնտռողը միշտ, կըգտնի, եթէ միայն նա ճիշտ ազատութիւն է փնտռում, որովհետև նա այդ իրաւունքը իր հետ է ծնել։ Ինքնուրոյնութիւնը չէ տրվում, այլ ձեռք է բերվում յամառ, խելացի աշխատութիւնով։ Ցաճկարնակ հայը կորցրել է իր գիտակցութիւնը դարաւոր ճնշման տակ և նրան հարկաւոր է ազատ շունչ քաշել, այդ զգացել է Եւրոպան և անում է ինչ հարկն է։ Այլ էր Բոլգարիան 1876 թուականին։ Ամեն մի Բոլգարացի իր վիճակն աւելի վատացնում էր, իր հացի փողը զէնքի էր տալիս ինքնուրոյնութիւն ստանալու համար և նրա գիւղացիական ձգտումը վարակեց ուս ժողովրդին, որ Բոլգարացու ետեւից հասաւ այն ժամանակ, երբ արդէն պատերազմի դաշտում արիւնաթաթաւ կռուում էր իր թշնամու դէմ...Բայց այդ բոլորն իր կարգին. ձեզ հարկաւոր է իմանալ թէ ինչ կը լինի ռէֆորմների ծրագրի հետ։ Այժմ ուշ է այլ ես ծածկելը, ուստի ես կասեմ ձեզ անկեղծօրէն, որ այդ ծրագիրը կ'իրականանայ անպատճառ, ինչ որ էլ լինի։ Այժմ Եւրոպան արդէն ձեռք է բերել ստիպողական միջոցներ գործադրելու բոլոր իրաւունքները, իսկ եւրոպական պետութիւններից մէն էլ որ հրաժարուի այդ իրաւունքներից, Անգղիան չի հրաժարուիլ, որովհետև անգղիական դիպլոմատիան չէ կարող հակառակել իր ազգի կամքին, պահանջին։ Բայց թէ այդ ռէֆորմները կարող են չծառայել այն նպատակին, որին ձգտում են ամենալաւ հայերը և ամեն մի արդարամիտ մարդ, զրանում մեղաւոր չի լինի ոչ Եւրոպան, ոչ մասնաւորապէս Անգղիան և ոչ իսկ Տաճկաստանը, այլ այն ազգը, որ միայն հաշիւ է պահանջում և ինքը ոչինչ չէ ուզում անել...»։

Այստեղ կանգ եմ առնում, որովհետև թղթատարի ժամանակն անցնում է։

Ս. Հախումեանց։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՔԱՋԲԵՐՈՒՆԻՔ, 15 յուլիսի.

(Թղթակցութիւն Արծագանքի։)

Ցունիս ամիսն ալ հոլովեցինք, հայուն յոյսը չպսակուեցաւ։ Եւ տակաւին անհամբեր կըսպասեմք խոստացեալ բարեաց և երկնային պարգեաց։ Մեր վիճակին մէջ ալ փոփոխութիւն չկայ. դարձեալ անհամար սպանութիւնք, գերեվարութիւնք, առևանգութիւնք, պէսպէս և նոր-նոր հարստահարութիւնք, ասոնք ամենքն ալ պատրաստուած, լրուած և նիւթուած՝ անպակաս են հայուն համար արդի չարաբարոյ պաշտօնէից յոռի վարչութեանց միջոցաւ։ Այսպէս է Տաճկահայոց կեանքը, և դեռ ես քան զես միենոյն եղեռնագործութիւն կըշարունակուին ի Հայաստան ի յուէտ աւերումն համայն հայութեան։

Արծկէոյ գիւղօրայքը մեծ վտանգի մէջ են. քրդական աւարառութիւնքն վերսկսած են. օրին մէկ գիւղի վրայ յարձակելով՝ աչքին ընկած ինչք և ստացուածք կըյափշտակին։ «Կըրկ ըսուած գործը կըշարունակուի, ուր որ ցորեանը հասունցած է քիչ շատ։ Կըրկի քրդերէն բառ է, որ կընշանակէ քրդաց կողմանէ խումբ. խումբը գիշերները արտօրայքը կերթայ, հասկերը մանգաղով կը կտրէ, և թեռի կամ մախաղի մէջ կըլեցնէ ու տուն կը փոխադրէ։ Եւ այսպէս շարունակ, քանի որ ցորեան կայ արտերուն մէջ։ Այս սովորութիւնը գրեթէ 20—30 տարի է, որ մտած է քրդաց մէջ. և առանց իրենց գիմակալող ոյժի մը կը գործեն անվախ, կուտեն և կըմարսեն անվախ։

Հայ գիւղացւոյն բոլոր տարեկան վաստակն ու ջանքը այսպիսով կը ջընջուին, ի դերև կելնեն. ի ժամ պտղոյ իւր վար ու վաստակէն, իւր կալ ու կթէն անմասն կելնէ խեղճուկ շինականն, որի ապրելու միակ միջոցն է երկրագործութիւն։ Ալ ինչպէսսիվ պիտի ապրի, քաղցէն ու մերկութենէն մեռնիլ կըմնայ իրեն, քանի որ թէ իւր օրապահիկն և թէ իւր մերկութեան ծածկոյթը հացէն կը պատրաստուի։

Աղքատութեան, սովի և բռնութեան ճիրաններու մէջ կը հեծի խեղճուկ շինական ժողովուրդ, ամեն բերաններէ ախ ու վախի հեղձամղձուկ ձայները կըբարձրանան։ Ճատեր կըստիպուին իրենց տուն ու տեղ, կանաչ արտեր և անասնեղէնը, եթէ երբէք կըզտնուի, կիսագին ծախել, երթալ Պարսկաստանէն հաց գնել և այնու սովի տաղնապէն ազատուիլ։ Օսմանեան «բարեգութ» կառավարութիւնն այս ամեն արհաւիրքներն ինքեան հաճոյք և զուարճալիք կըհամարի. հարկահաւաք ոստիկանները հայ գիւղօրայքը սփռելով՝ զինու զօրութեամբ աղքատ, նօթի, մերկամարմին խուժանէն մի քանի տարուան հարկ կը պահանջէ։ Հազարաւոր անձինք բանտ լեցնելով իբրև մահապարտ՝ յետին նաթարակիան անգամ չառած՝ չարձակեր։ Անցեալ օր պիս իսկ երկու շարաթ բանտելով՝ 370 դահեկան ազնամի (ոչխարգլուխ $3^1/_2$ դահեկան տարեկան) տուրք և չորս տարուան հարկ առնելով՝ այնպէս թողուցին, թէև այդ հարկը անգամ մը վճարած էի։ Իմ թախանձանաց և ապացուցման արդիւնքը ոչինչ եղաւ։ Երէկ քիւրդի մը հետ յակամայիցս դատի ինթարկուեցայ. հայ վկաներս չընդունուեցան. քիւրդ վկայ ալ չունէի. 400 դահեկան արժողութեամբ արդար դատս փճացաւ։ Այսպէս կըզրկուին ամենքն. կառավարութիւնը կը խրախուսէ, որ հայուն զրկեն, թալանեն, կողոպտեն, սպանեն։ Ի Գողեր գիւղ Ալի աղայի մանչ Պրահիմ անուն ժանտաբարոյ անձը երիտասարդ մը այն աստիճան բրածեծ ըրաւ, որ երկու ամիս է ոչ կըմեռնի, ոչ կապրի։ Նոյն գիւղէն զարնանս Էմին փաշայի եղբայր Ալիպէյ 10 քիլէ ցորեան բռնեց՝ «ձեր գիւղը պահպանելու վարձն է» կըսէ։ Մինչդեռ այս տարաբախտ գիւղացիքը տարուան չորս եղանակաց մէջ այնչափ իրենց համար չեն աշխատեր, որչափ այս բարբարոսներու համար։

Ամառն այլ զրկանաց ևս կ'ենթարկուին մեր գիւղօրայք. զի ճամբու վրայ լինելով՝ ամբողջ հայդարանցի քրդաց ուղին է. ամեն մէկ անց ու դարձին կ'իջնեն, ամեն տեսակ ապր և ապահանութիւն կը գործեն, ապա կը մեկնին։ Ինչպէս ամեն տարի՝ այս տարի ալ տաճիկ և քիւրդ կրաբդաբներ կը պատին՝ որպէս թէ երկրի պահպանման և խաղաղութեանը կը հսկեն։ Բայց ուր որ իջնեն, կ'ուտէն, կաւշակեն և այնպէս կը մեկնին. թող յիշոց, և հետևեալ խօսքերը. «հալա սապը էտինդ, պունտան սօրա նէ՞էր կէլիր պաշընդա». այսինքն՝ դեռ համբերեցէք, տեսէք ասկէ վերջ ինչե՞ր պիպի գայ ձեր գլխուն։

**

ՆՈՐՁԷՆ (Բղնունեանց գաւառ) գիւղից մեզ գրում են.

«Քիւրդ Սալայի լաճ Մամէ անուն մարդ մեր գիւղի զղերն է։ Գիւղիս Վրդոյ որդի Մլժոյ կնոջ գեղեցկութիւնը տեսնելով՝ կուզէր իրան սեպհականել։ Կինն ընդդիմացաւ, յայտնեց, որ նորա կամաց հետ երթալու և կրօնափոխութիւն յանձն առնելու միտք չունի։ Մի օր կինը գիւղի վերը բանջարի գնացած ատեն՝ յիշեալ քիւրդ Մամէն եռանէն կընկնի, կը բռնէ, Հանպատուէ, քարով գլուխը կը ջախջախէ, կըսպանէ, նրա մարմինը ջրին մէջ կը ձգէ և գիւղ կերթայ։ Գիւղացիք գիտակցի հանդիպելով՝ կը հանեն, գիւղը կը բերեն։ Գղլի արիւնաշաղաս լաթեր տեսնելով՝ ոստիկաններ ակամայից զինը կը ձերբակալեն, բայց քանի մը օր կ'անցնի և կ'արձակեն»։

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆԻՒ-ԵՕՐՔԻՑ

Ամերիկայի հայոց հոգևոր հովիւ Սրբ. Մաղաքիա Վ. Տէրունեանի վրայ այլանդակ արձակում մը վերջերս երևցաւ «Մշակին» մէջ, որուն ընաւ տեղի չկար։

«Մշակի» գրածին նայելով Մաղաքիա վարդապետ Ամերիկայի հայոց կը քարոզէ եղեր որ այլակրօն ազգայիններէ հեռի կենան։ «Մշակ» կը ասէ։ Եթէ «Մշակը» 10,000 մղոն հեռուէն իրեն արժանաւոր թղթակիցներէ լսած է Մաղաքիա վարդապետին վրայով՝ այս տողերը գրողն Մաղաքիա վարդապետն անձամբ կը ճանչնայ և գիտէ որ այդպիսի ամբաստանութիւն մը անոր վրայ ընելն յետին աստիճան ծիծաղաշարժ խեղկատակութիւն մ'է։ Որպէս զի հասկացուի թէ ես Մաղաքիա վարդապետին վրայ մասնաւոր համակրութիւն մը ունենալով չէ որ դէնքը կուգամ պաշտպանել՝ պէտք է խոստովանիմ թէ ես գոհ չեմ որ անոր պէս մեղմ մարդ մը Ամերիկայի հայոց հովուութեան գժուարին պաշտօնին վրայ կը գտնուի։ Ամերիկայի հայոց հովուութիւնը հաստատակամ և քաջասիրտ անձի մը կը կարօտի՝ որ կընայ դէպի իւր գառնուկներն գորովագութ սիրտ մը կրել, և մացառներու մէջ թաղչող գարնակալ գայլերու համար ալ կողկոռիչ բիր ունենալ։

Սուտ է և զրպարտութիւն է ըսել թէ Մաղաքիա վարդապետ իւր հօտին կը քարոզէ հեռի կենալ այլակրօն հայերէ, ընդհակառակն մինչև իսկ այնքան չափազանց ներողամիտ է, որ թոյլ կուտայ որ բողոքական հայեր ալ գան և Ուստը քաղաքի հայոց Սուրբ Փրկիչ եկեղեցւոյ ժողովարարէն մէջ ատենաբանեն։ Եւ բողոքականք այս հիւրասիրութեամբ չբաւականանալով կուզեն իւրեանց կրօնական հաւատալեացը համեմատ կարգադրութիւններ տնօրինել՝ իբր թէ իրենք եկեղեցւոյն տէր և բուն հայերը դրսեն եկող հիւրեր եղած լինէին։ Եթէ կրօնական խնդիրներ յարուցանելով, ժողովուրդը յուզողներ կան, այն ալ բողոքական քարոզիչներն են։ Հայաստանեայց եկեղեցւոյն մէջ միայն վառաբանական պաշտօն կը կատարուի մինչդեռ բողոքական կրօնական ժողովները գլխաւորաբար մէկ ժամ տևողութիւն ունեցող երկար քարոզէ մը կը բաղկանայ և քարոզիչները ուրիշ բան չեն ըներ, բայց եթէ անիմաստ բծախնդրութիւններով զբաղիլ և Հայաստանեայց եկեղեցւոյ այս ու այն վարդապետութիւններ քննադատել և խծբծել, Մի քանի բողոքական պատուելիներ, որք ամերիկացոց ժողովարաններուն մէջ հայերէն լեզուաւ կրօնական ժողով կընեն և իրենց յանախորդներու թոյն համեմատ աւելի կամ պակաս թոշակ կըստանան, իրանց ամսականները բարձրացնելու համար ամեն նուաստ միջոցներու կը դիմեն, որ հայ հասարակութեան մէջ խռովութիւններ հանեն ընդդէմ վարդապետին և յետոյ յանցանքն անոր վրայ ձգելով զինքը այնքան նեղեն ու անհանգիստ ընեն որ ձգէ ու փախչի և հայոց եկեղեցին փակուելով հայերը առանց եկեղեցւոյ մնան և ստիպուեն այդ պատուելիների ժողովներուն յանախել՝ որով թէ «Ցիրոջ գործը» յառաջ կերթայ և թէ իրենց ամսականներն կ'աւելանան։ Այս պատուելիներն ամեն օր ամեն բան կը լինին վարդապետին նեղութիւն տալու համար՝ օր մը թիւրասէր կը լինին և օր մը կարմիր յեղափոխական, օր մը հնչակեան և օր մը դրօշակեան, օր մը եղբայրասէր և օր մը կրօնամոլ։ Ուր որ վարդապետին դէմ փքը կրակ մը կը տեսնեն, անմիջապէս հոն կը վազեն և «մենք ալ ձեզմէ ենք» ըսելով կը սկսեն կրակն հովահարել։ Որքան նեղութիւններ տուին նախորդ հովիւ Յովսէփ վարդապետ Սարաճեանին, որ բոլորովին զզուելով երիցս իւր հրաժարականը տուաւ (թէպէտև Կ. Պոլսոյ Ազգային Ժողովէն մերժուեցան առաջին երկու հրաժարականները)։

Մաղաքիա վարդապետ հոս գալէն ի՛վեր ասոնց դատադրութիւններովը շարունակ նեղուած է, և սոցա դիտաւորութիւնն է նեղութիւններն օր ըստ օրէ աւելացնել մինչև որ ձգէ ու Կ. Պոլիս փախչի և այնտեղ իւր օձիքը թոթուելով այնպիսի փորձառութիւններ պատմէ, որ ամեն վարդապետ վախնայ և մէկն ալ Ամերիկայի հայոց հովուութեան պաշտօնը չընդունի։ Այն ատէն «Ցիրոջը գործը» յառաջ կերթայ։

Տակաւին մի քանի ամիս առաջ մեր ազգայիններէն մին, որ Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ զաւակ մ' է, Ուստը գացած լինելով Ս. Փրկիչ եկեղեցւոյն մէջ եղող ազգային ժողովոյ յատկացեալ սրահին մէջ պիտի ատենաբանէր, բայց բարեպաշտ (՞՞՞) պատուելիներու զբաղմամբ խումբը մը բողոքական ստահակներ եկան և սրահին մէջ բազմելով հրամայեցին, որ այդ անձը չատենաբանէ, ըսելով, որ հակառակ պարագային արիւնհեղութիւն պիտի լինի։ Ցիշեալ ազգայինը հայոց յատուկ եղող խաղաղասիրութեամբ այդ օր չատենաբանեց։ Եւ ինչ էր պատճառը, որ այդպիսի եէնիչէրիական վայրագութեամբ եկան հայոց եկեղեցւոյն մէջ հայ ժողովրդեան վրայ բռնացան և թոյլ չտուին, որ Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ զաւակունք իրենց սեփականութիւնն եղող եկեղեցւոյն մէջ իրենց ուզած մարդուն ատենաբանութիւնը լսէին.—որովհետև այդ ազգայինն, որ պիտի ատենաբանէր, ուրիշ անգամներ ատենաբանելով ըսած էր թէ Հայաստանեայց եկեղեցին ուղղափառ է և անոր վրայ եղած յարձակումներն անիրաւ են, և իբրև օրինակ Հայաստանեայց եկեղեցւոյ ինչ ինչ վարդապետութիւններն հաստատող ապացոյցներ ներկայացուած է աւետարանէն։ Բողոքականք միշտ հայոց վրայ կը յարձակին, այն բան չէ, իսկ երբ հայք իւրեանց եկեղեցին կը պաշտպանեն այդ այնչափ մեծ ոճիր կը լինի, որ մեր բարեպաշտ պատուելիներու ժողովուրդն արիւնհեղութիւն կըսպառնայ։

Ահա այդպիսի մարդոց է, որ «Մշակը» կը կողմնակցի և կ'աջակցի, և տակաւին անպատկառօրէն իբրև հայ թերթ, և իբրև ընտանի անդամ հայութեան՝ կը խօսի և կը պարսաւէ զՄաղաքիա վարդապետ և այդ առթիւ ընդհանուր հայ կղերականութիւն՝ ըսելով. «Իսկ հայ կղերը միշտ փանատիզմի պաշտպան և կրօնական անմիտ մոլեռանդութեան կողմնակից»է։ Եւ հայ կղերին վրայ յարձակում ընելուն մէջ շահ ունեցողներն ալ «Մշակին» այսպիսի վայրահաչութիւններն իբրև բնաբան կը գործածեն, իբր թէ «Մշակը» հայ հեղինակութիւն մը եղած լինէր։

Մեր ամերիկաբնակ հայ-բողոքական պատուելիներուն ալ կը յորդորեմ, որ հիմակուան վատատակութիւն բաւականան և աւելին չհետամտեն, մի գուցէ ձեռքերնին եղածն ալ կորսնցնեն։ Թող այդ պատուելիներն Մաղաքիա վարդապետին յարգը ճանչնան և գիտնան, որ ամեն հայ վարդապետ այդքան մեղմ չլինիր։ Հիմակուան Պարիսիզը Իրմիրլեանն է։

Ապահ.

Նիւ-Եորք 10 յուլ.
1895 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍՏԱՄԲՈՒԼՈՎԻ ԹԱՂՄԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ

Օրուայ երեք ժամին դադարը՝ սլլսակներով ծածկուած, դուրս բերին Ստամբուլովի ընակարանից։ Թուրքաւորութեանը մասնակցում էին Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Աւստրիայի, Բուլգարիայի, Թուրքիայի, Յունաստանի և Սերբիայի ներկայացուցիչները։ Երբ բնակարանից մօտ 300 քայլ հեռացան, թափորը կանգնեց. այդտեղ

ոգուն բոլորովին հակառակ, արևմուտքից թելադրուած՝ մի իրաւաբանական բացատրութիւն է միայն, որի ազդեցութիւնը իւր վրայից թօթափելու համար չատ ջանք է գործ դրել նոյն ինքն յունական եկեղեցին և մասամբ յաջողեցրել ե տիեզերական ժողովի և Յովհաննէս Դամասկացու զրուածների միջոցով։ Բայց ոչ Քաղկեդոնի ժողովը միայն, այլ յիրաւի նաև միւս 3 տիեզերական ժողովները, մանաւանդ վերջինը, իրենց հետևանքներով՝ այնպիսի մի մեծ անջրպետ են Հայոց և Յունաց եկեղեցիների մէջ, որ մենք երբէք վերցնել չենք կարող, առանց մեր ամբողջ պատմութեան վրայ մի սև գիծ քաշելու։ Թէ ինչու, այդ ցոյց տալու համար երկար և մանրաքննին ուսումնասիրութիւններ են պէտք, որոնցից մենք չենք փախչում, այլ պիտի աշխատենք մեր բոլոր կարողութեան չափով, և շատ ուսյս կըլլինինք, եթէ կատարուի արժանայարգ յօդուածագրի ցանկութիւնը՝ երկուսակ աշխատանքով պարզելու այս կարևոր խնդիրը, որպէս զի եկեղեցիներից իւրաքանչիւրը ճանաչել և յարգել սովորէ միւսին և, իւր ինքնուրոյն յատկութիւնները պահելով՝ կարողանայ հաստատել նորա հետ այն միակ հնաբաւոր և օգտակար միութեան կապը, որով բոլոր ճշմարիտ քրիստոնեաները միացած՝ ընդհանուր Ջանք գործ կընեն ընհանուր թշնամու՝ հակաքրիստոնէական զաղափարների և շարժումների դէմ և աշխարհը կընուաճեն ընդհանրական եկեղեցւոյ մի անսասանելի Գլխոյ համար՝ նորա սուրբ անունով, նորա ներշնչած հաւատով, նորա խօսքի զօրութեամբ։ Կ. Վ.

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ

Սասուն...դիւցազնց աշխարհ։

Այդ անունով կոչւում է մի գաւառ, որ Հայոց Աղձնիք նահանգի մի մասն էր, և բռնում է Սիմ լեռնագօտու հարաւ-արևմտեան փէշերը։ Գաւառն ունի քառասնաչափ գիւղեր, որոնց մէջ անդրանիկ տեղը գրաւում է Սասուն քերդաւանը. դրա անունովն էլ ամբողջ գաւառը Սասուն կամ Սասունք է կոչւում։

Սասունի հիմնարկութիւնը մեզանից հազարաւոր տարիներ առաջ է կատարուել։ Աստուածաշունչ գիրքը յայտնում է, որ Ասորոց Սենեքերիմ թագաւորը որոշել էր իւր որդոցը՝ Սանասարին և Աբամելիքին զոհել իւր կուռքերին։ Որդիքն իրանց հօրն սպանեցին և փախան Հայաստան։ Այդ դէպքը կատարուել է Քրիստոսից եօթն հարիւր տարի առաջ։ Ասորեստանը զօրացել էր. նրա շղթաների ծանրութեանը ենթարկուած էին առաջակողմեան Ասիայի գրեթէ բոլոր ազգերը։ Ազատ էր հայոց աշխարհը. երկրի լեռնային դիրքը, ժողովրդի արիութիւնն ու ազատասիրութիւնը թոյլ չէին տալիս, որ Ասորեստանի միապետները տիրէին Հայաստանին։ Սանասարն ու Աբամելիքը իրանց հօրն սպանելով՝ Հայաստանում ապաստան գտան՝ իբրև մի ազատ ապահով երկրում։

Մովսէս Խորենացին և նրա հետևող հայ պատմագիրներն ևս հաղորդում են այդ պատմական իրողութիւնը, աւելացնելով՝ որ Հայոց թագաւորները նրանց բնակութեան տեղ տուին Հայաստանի հարաւային արևմտեան և հարաւային արևելեան կողմերում, որ նրանցից ծագեցաւ Արծրունեաց և Գնունեաց նախարարական տները։

Աւելի մանրամասն և աւելի բանասիրական է հայ ժողովրդի աւանդութիւնը։ Հարիւրաւոր դարեր են անցել, բայց այսօր էլ Մոկաց և Աղձնեաց հայերը պատմում են քեզ, որ մի զօրեղ ու զօրնդեղ թագաւոր է եղել՝ Հայոց հեռ խիստ թշնամի։ Մի անգամ պատերազմով Հայաստան գնալով, շատ նեղն էր ընկել, չէր իմանում, թէ ինչպէս ազատուի հայերի ձեռքից։ Կանչեց իւր ատուածներին և ասաց. «ազատեցէք ինձ այս ազգից, որ ողջ դառնամ, որդիքս ձեզ մատաղ կանեմ»։ Եւ Ասորեստանի թագաւորն ազատուեցաւ. որդիքն իմացան հօր մտադրութիւնը, սպանեցին նրան, փախան, եկան Հայաստան։

Երկար ճանապարհ գնալով մի նեղ ձոր հասան։ Ձորի միջով գետ էր անցնում. իսկ վերևից մի առու էր գալիս. գալիս էր, ուժով շերտում էր գետի ջուրը մինչև մէջտեղը և յետոյ նոր խառնուում, գնում։

Եղբայրներն ասացին. «ով որ այս ջրի ակը գտնէ, և այնտեղ բերդ շինէ, նրան եթէ որդի լինի, այսպէս ուժեղ կըլինի։ Լեռնիվեր գնացին, ջրի ակը գտան։ Երկուսով աշխատեցին բերդը շինել, բայց ինչպէս կը շինէին։ Վեր կացան, Հայոց թագաւորին դիմեցին և նրանից օգնութիւն խնդրեցին։ Թագաւորը սիրեց նրանց, գովեց նրանց եռանդը և ցանկացած օգնութիւնը տուաւ։

Գնացին ու բերդը շինեցին։ Ապա թագաւորին դիմեցին, որ գայ և բերդին անուն դնէ։ Թագաւորը որդեգրեց Աբամելիքին, իւր աղջիկը նրան կնութեան տուաւ. գնաց, մեծ հանդիսով բերդը մտաւ, շատ հաւանեց բերդի շինութիւնը. աւելի ևս նրան զիւր եկան կանգնեցրած գեղեցիկ քարէ սիւները, ուստի և բերդի անունը Սեանսուն կամ Սասուն դրեց։

—

Սասունցոց հին քաջերի, սասունցոց հին գիւցազունների արարքների մասին լսում է պատմութիւնը, բայց չի լսում ժողովուրդը։ Դա իւր վէպերի մէջ անմահացրել է այդ գիւցազուններին։ Դարեր անցան, Հայաստան աշխարհում շատ բերդեր ու քաղաքներ աւեր դարձան, բայց այդ վէպերը որդոց որդի անցնելով՝ մեզ հասան։ Ուշադրութեան արժանի է, որ հայ ժողովրդի գիւցազնական վէպի նիւթը Սասունցին է առնուած, դարերի ընթացքում հայ ժողովրդի հաւատը դէպի լաւագոյն ապագայ և յարգանքը դէպի անցեալ մեծագործութիւնները վառ է պահել սասունցի գիւցազն։

Այդ գիւցազնական վէպերից նշանաւոր է Դաւթի վէպը՝ թէ գեղարուեստական և թէ իդէական բարձր արժանաւորութիւններով։ Այստեղ են մարմնացել հայ ժողովրդի ազգային իդէալները։

Խորենացու առաջին գիրքը, որ գրեթէ ամբողջապէս հիւսուած է ժողովրդական վէպերից, ծանօթացնում է մեզ այդ իդէաների հետ, ի դէմս Հայկի, Արամի և Արայի։ Մեր առջև հանդիսանում են նախնական հայի իդէալները՝ ազատասիրութիւն, հայրենասիրութիւն և ընտանիքի սրբութիւն։ Հայկի վէպի՝ կուղէք պատմութեան մէջ մենք տեսնում ենք «հպարտացեալ բարուց» տէր մի ժողովուրդ, որ ընակելով «ի մէջ ցըրնով մեր գիւղի զղերն է։ Գիւղիս Վրդոյ որդի Մլժոյ կնոջ գեղեցկութիւնը տեսնելով՝ կուզէր իրան սեպհականել։ Կինն ընդդիմացաւ, յայտնեց, որ նորա կամաց հետ երթալու և կրօնափոխութիւն յանձն առնելու միտք չունի։ Մի օր կինը գիւղի վերը բանջարի գնացած ատեն՝ յիշեալ քիւրդ Մամէն եռանէն կընկնի, կը բռնէ, Հանպատուէ, քարով գլուխը կը ջախջախէ, կըսպանէ, նրա մարմինը ջրին մէջ կը ձգէ և գիւղ կերթայ։ Գիւղացիք գիտակցի հանդիպելով՝ կը հանեն, գիւղը կը բերեն։ Գղլի արիւնաշաղաս լաթեր տեսնելով՝ ոստիկաններ ակամայից զինը կը ձերբակալեն, բայց քանի մը օր կ'անցնի և կ'արձակեն»։

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆԻՒ-ԵՕՐՔԻՑ

—

Ամերիկայի հայոց հոգևոր հովիւ Սրբ. Մաղաքիա Վ. Տէրունեանի վրայ այլանդակ արձակում մը վերջերս երևցաւ «Մշակին» մէջ, որուն ընաւ տեղի չկար։

«Մշակի» գրածին նայելով Մաղաքիա վարդապետ Ամերիկայի հայոց կը քարոզէ եղեր որ այլակրօն ազգայիններէ հեռի կենան։ «Մշակ» կը ասէ։ Եթէ «Մշակը» 10,000 մղոն հեռուէն իրեն արժանաւոր թղթակիցներէ լսած է Մաղաքիա վարդապետին վրայով՝ այս տողերը գրողն Մաղաքիա վարդապետն անձամբ կը ճանչնայ և գիտէ որ այդպիսի ամբաստանութիւն մը անոր վրայ ընելն յետին աստիճան ծիծաղաշարժ խեղկատակութիւն մ'է։ Որպէս զի հասկացուի թէ ես Մաղաքիա վարդապետին վրայ մասնաւոր համակրութիւն մը ունենալով չէ որ դէնքը կուգամ պաշտպանել՝ պէտք է խոստովանիմ թէ ես գոհ չեմ որ անոր պէս մեղմ մարդ մը Ամերիկայի հայոց հովուութեան գժուարին պաշտօնին վրայ կը գտնուի։ Ամերիկայի հայոց հովուութիւնը հաստատակամ և քաջասիրտ անձի մը կը կարօտի՝ որ կընայ դէպի իւր գառնուկներն գորովագութ սիրտ մը կրել, և մացառներու մէջ թաղչող գարնակալ գայլերու համար ալ կողկոռիչ բիր ունենալ։

Սուտ է և զրպարտութիւն է ըսել թէ Մաղաքիա վարդապետ իւր հօտին կը քարոզէ հեռի կենալ այլակրօն հայերէ, ընդհակառակն մինչև իսկ այնքան չափազանց ներողամիտ է, որ թոյլ կուտայ որ բողոքական հայեր ալ գան և Ուստը քաղաքի հայոց Սուրբ Փրկիչ եկեղեցւոյ ժողովարարէն մէջ ատենաբանեն։ Եւ բողոքականք այս հիւրասիրութեամբ չբաւականանալով կուզեն իւրեանց կրօնական հաւատալեացը համեմատ կարգադրութիւններ տնօրինել՝ իբր թէ իրենք եկեղեցւոյն տէր և բուն հայերը դրսեն եկող հիւրեր եղած լինէին։ Եթէ կրօնական խնդիրներ յարուցանելով, ժողովուրդը յուզողներ կան, այն ալ բողոքական քարոզիչներն են։ Հայաստանեայց եկեղեցւոյն մէջ միայն վառաբանական պաշտօն կը կատարուի մինչդեռ բողոքական կրօնական ժողովները գլխաւորաբար մէկ ժամ տևողութիւն ունեցող երկար քարոզէ մը կը բաղկանայ և քարոզիչները ուրիշ բան չեն ըներ, բայց եթէ անիմաստ բծախնդրութիւններով զբաղիլ և Հայաստանեայց եկեղեցւոյ այս ու այն վարդապետութիւններ քննադատել և խծբծել, Մի քանի բողոքական պատուելիներ, որք ամերիկացոց ժողովարաններուն մէջ հայերէն լեզուաւ կրօնական ժողով կընեն և իրենց յանախորդներու թոյն համեմատ աւելի կամ պակաս թոշակ կըստանան, իրանց ամսականները բարձրացնելու համար ամեն նուաստ միջոցներու կը դիմեն, որ հայ հասարակութեան մէջ խռովութիւններ հանեն ընդդէմ վարդապետին և յետոյ յանցանքն անոր վրայ ձգելով զինքը այնքան նեղեն ու անհանգիստ ընեն որ ձգէ ու փախչի և հայոց եկեղեցին փակուելով հայերը առանց եկեղեցւոյ մնան և ստիպուեն այդ պատուելիների ժողովներուն յանախել՝ որով թէ «Ցիրոջ գործը» յառաջ կերթայ և թէ իրենց ամսականներն կ'աւելանան։ Այս պատուելիներն ամեն օր ամեն բան կը լինին վարդապետին նեղութիւն տալու համար՝ օր մը թիւրասէր կը լինին և օր մը կարմիր յեղափոխական, օր մը հնչակեան և օր մը դրօշակեան, օր մը եղբայրասէր և օր մը կրօնամոլ։ Ուր որ վարդապետին դէմ փքը կրակ մը կը տեսնեն, անմիջապէս հոն կը վազեն և «մենք ալ ձեզմէ ենք» ըսելով կը սկսեն կրակն հովահարել։ Որքան նեղութիւններ տուին նախորդ հովիւ Յովսէփ վարդապետ Սարաճեանին, որ բոլորովին զզուելով երիցս իւր հրաժարականը տուաւ (թէպէտև Կ. Պոլսոյ Ազգային Ժողովէն մերժուեցան առաջին երկու հրաժարականները)։

Մաղաքիա վարդապետ հոս գալէն ի՛վեր ասոնց դատադրութիւններովը շարունակ նեղուած է, և սոցա դիտաւորութիւնն է նեղութիւններն օր ըստ օրէ աւելացնել մինչև որ ձգէ ու Կ. Պոլիս փախչի և այնտեղ իւր օձիքը թոթուելով այնպիսի փորձառութիւններ պատմէ, որ ամեն վարդապետ վախնայ և մէկն ալ Ամերիկայի հայոց հովուութեան պաշտօնը չընդունի։ Այն ատէն «Ցիրոջը գործը» յառաջ կերթայ։

Տակաւին մի քանի ամիս առաջ մեր ազգայիններէն մին, որ Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ զաւակ մ' է, Ուստը գացած լինելով Ս. Փրկիչ եկեղեցւոյն մէջ եղող ազգային ժողովոյ յատկացեալ սրահին մէջ պիտի ատենաբանէր, բայց բարեպաշտ (՞՞՞) պատուելիներու զբաղմամբ խումբը մը բողոքական ստահակներ եկան և սրահին մէջ բազմելով հրամայեցին, որ այդ անձը չատենաբանէ, ըսելով, որ հակառակ պարագային արիւնհեղութիւն պիտի լինի։ Ցիշեալ ազգայինը հայոց յատուկ եղող խաղաղասիրութեամբ այդ օր չատենաբանեց։ Եւ ինչ էր պատճառը, որ այդպիսի եէնիչէրիական վայրագութեամբ եկան հայոց եկեղեցւոյն մէջ հայ ժողովրդեան վրայ բռնացան և թոյլ չտուին, որ Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ զաւակունք իրենց սեփականութիւնն եղող եկեղեցւոյն մէջ իրենց ուզած մարդուն ատենաբանութիւնը լսէին.—որովհետև այդ ազգայինն, որ պիտի ատենաբանէր, ուրիշ անգամներ ատենաբանելով ըսած էր թէ Հայաստանեայց եկեղեցին ուղղափառ է և անոր վրայ եղած յարձակումներն անիրաւ են, և իբրև օրինակ Հայաստանեայց եկեղեցւոյ ինչ ինչ վարդապետութիւններն հաստատող ապացոյցներ ներկ

էր կատարուել չարագործութիւնը։ Պետկովը՝ որ կապած ձեռքով հետեւում էր զգաստին ոգևորուած ճառախօսեց. նա մեղադրում էր հայրենիքի թշնամիներին, որոնք այդ սոսկալի չարութիւնը գործեցին, որոնք սպանեցին նրան, որին պարտական է Բոլղարիան իւր ազատութեամբ։

Հակառակորդները ամուլ բարձրացրին. երբանցում ընկաւ. Պետկովի ճառը կիսատ մնաց։

Դագաղի վրայ 600 պսակ էր դրուած, ի թիւս այլոց Աւստրիայի թագաւորի և անգլիական թագուհու կողմից։ Գրեթէ բոլոր պսակները յուղարկաւորութեան ժամանակ ամբոխը ոտքի տակ տուաւ, տրորեց։

Ճառնայի պատգամաւորութեան գլուխը Ստամբուլովի գերեզմանի վրայ լաց եղաւ և երդուեց մեծ հայրենասէրի սպանութեան վրէժն առնել։

Թաղման ժամին խուռն բազմութիւն ժողովրդի տօնական հանդէսներ էր կատարում Ստամբուլովի հակառակորդների գերեզմանների վրայ երգերով և ճառերով։

Բոլոր սոցիալիստներն այդ ցոյցերին մասնակցելուց յետոյ խուռն բազմութեան ուղեկցութեամբ ֆրանսիական հիւպատոսարանի առջեւը հաւաքուեցան շնորհակալութիւն յայտնելու, որ ֆրանսիական մամուլը համակրութեամբ է վերաբերւում դէպի Ստամբուլովի սպանութիւնը։

Նոյն օրը Սոֆիայի բոլոր փողոցներում պատերից թղթեր էին կպցրած, որոնցով հայհոյւում էր Ստամբուլովն ու իւր յիշատակը, յայտնւում էր՝ թէ նա իւր արժանի վարձն է ստացել։

Բուլղարիայի ներքին դրութիւնը աւելի և աւելի ծանր կերպարանք է ստանում։ Կարծւում է, թէ Ստոյլովը շուտով հրաժարական կը տայ։ Իշխան Ֆերդինանդն ուրիշներից է խորհուրդ հարցնում իւր անելիքի մասին։ Անգլիական, գերմանական, աւստրիական և իտալական մամուլը շարունակում է իւր յարձակումները Բուլղար կառավարութեան և իշխան Ֆերդինանդի վրայ։ Անգլիական պահպանողական կուսակցութեան օրգան «Standard» լրագիրը խօսելով Բուլղարիայի մասին, գրում է. «Իշխան Ֆերդինանդը պէտք է անմիջապէս հրաժարուի. ներկայ դրութիւնն ստեղծուել է նրա խարդաւանքների շնորհիւ։ Մի ժամանակ իշխանը զօրաւոր բարեկամներ ունէր. բայց դրանք երես դարձրին նրանից։ Բուլղարիան կարօտ է մի այնպիսի մարդու, որ հանձարեղ գլուխ և երկաթի ձեռք ունենայ։ Ստամբուլովը երկուսն էլ ունէր։ Այժմ Բուլղարիայում ոչ ոք չկայ, որ օժտուած լինի դրանցով»։

«National Zeitung»-ը «Բուլղարական դէպքերի քաղաքական իմաստը» վերնագրով յօդուածի մէջ համեմատում է Ստամբուլովին իշխան Ֆերդինանդի քաղաքականութիւնը։ Գովում է Ստամբուլովին, որ հետեւողաբար էր գործում, որ բացարձակ կերպով Ռուսիայի հետ բոլոր կապերը կտրեց։ Ֆերդինանդի գործունէութեան մէջ լրագիրը քաղաքական նըպատակ չի տեսնում, այլ միայն անմտութիւն։

Ստամբուլովի օրգան «Սվօբոդա» լրագիրը յայտարարում է, որ Ստամբուլովի կուսակցութիւնը չի ցրուիլ, այլ հաւատարիմ մնալով հանդուցեալի ծրագրին՝ եռանդով կը գործէ հայրենիքի անկախութիւնը պաշտպանելու համար։ Պետկովը իւր վրայ է առել կուսակցութեան ղեկավարութիւնը։ Դա յայտարարել է արդէն կուսակցութեան ծրագիրը, որ է Ստամբուլովի ծրագիրը—անփոփոխ կուռել ռուսաց ազդեցութեան դէմ և պաշտպանել Բուլղարիայի անկախութիւնը։ Ստամբուլովի թաղմանը ներկայ եղող պատգամաւորներն ընդունել են այդ ծրագիրը։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՑ

Յուլիսի 17-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Բարձրագոյն հրաման է հրատարակուած տասը ռուբլանոց թղթադրամների տեղ նոր ձեւի թղթադրամներ կտրելու։

ԼՕՆԴՕՆ.—Յուլիսի 14-ին այստեղ բացուեցաւ միջազգային աշխատագրական 6-րդ կոնգրէսը։

ՎԻԵՆՆԱ.—Մասնաւոր աղբիւրներից հաղորդում են «Polit. Corresp.»-ին. Թուրք-Բոլղարական սահմանի վրայ խռովութիւններ ծագեցնելու փորձերը ճնշուած են։ Թուրքերը ուշադրացրին մակեդոնացի ապստամբների խումբը։ Մօտ 50 ապստամբները մասամբ սպանուած են, մասամբ վիրաւորուած և կալուած։ Գերիներից մէկը բռնուած է Բոլղարական հեծելազօրի կապիտանի ղեկտեղով։ Թուրքաց ձեռքն են ընկել և մի քանի ուրիշ սպաներ ու մի զինուորական բժիշկ։

ՍՕՖԻԱ.—Տաճարում հոգեհանգիստ կատարուեցաւ երկու Բոլղար սպաների մահուան առթիւ, որոնք մակեդոնացի ապստամբների և թուրք զինուորների կռուումն են սպանուել։ Դի ցոյց էին հանուած սպաների պատկերները։ Ներկայ էին բազմաթիւ սպաներ, ատիճանաւորներ և զանազան կուսակցութեանց պատկանող քաղաքական գործիչներ։ Մակեդոնական յանձնաժողովի նախագահը ճառ խօսեց, որ աւարտեց «կեցցէ Մակեդոնիան» բացականչութեամբ։ Տաճարից դուրս գալով ցոյցեր կազմեցին՝ ի պատիւ այն մակեդոնացիների, որոնք թուրքերի դէմ կռուում մասնակցել էին, նրանց գրկում, ձեռների վրայ էին տանում։ Թափոր կազմուեցաւ, որտեղ մասնակցութիւն ունէին մի քանի հազար մարդ. դրանք մակեդոնական ռամպական երգը երգելով անցնում էին գլխաւոր փողոցներով. թափորի առջեւից տանում էին սպանուած սպաների պատկերները։ Հասարակութիւնը ոգեւորութեամբ ողջունում էր թափորը։

ԼՕՆԴՕՆ.—Կոկօնամից հեռագրում են. «Խիրսլիմից Գոբէ գնացող երկաթուղու գնացքի վրայ, որի մէջ 400 հիւանդ զինուորներ կային, ծովափի մօտ ջրասահանք ընկաւ, որ ծովը տարաւ գնացքի մի մասը, չոգեմեքենան և 11 չոգեկառք. 140 մարդ զոհ գնացին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Յուլիսի 14-ից.

Վեքսէլի կուրս 3 ամսով։

Լօնդօնի վրայ 10 ֆ. ստ.	93,00
Բերլինի վրայ 100 մարկ	45,45
Փարիզի վրայ 100 ֆր.	36,82⅝
Նոր կտրած պոլիմպեդիաներ	7,40 գն. 7.40 վաճ.
Բօրսայի վեղջը	5-ից 7%
4% Պետական արժեթղթ.	99¼
5% ոսկ. արժեթ. 1894 թ.	163
5% Առաջին ներքին փոխ. խաղատոմս 1864 թ.	252½
5% Երկր. ներքին փոխառ. խաղատոմս 1866 թ.	233¾
5% Ազնուակ. հող. բանկի գրական. խաղատոմս.	210
5% Պետական երկաթուղու արժեթուղթ	101½
4% Ներքին փոխ. I սեր.	98¾
» » » II »	98¾
» » » III »	98¾
» » » IV »	98¾
4½% փոխ. 1893 թուական.	100⅝
» փոխ. 1 հրատարակ.	100⅝
» փոխ. 2 հրատարակ.	100⅝
4½% Գրաւակ. արժեթղթ. ազն. հողային բանկի.	100¼
4½% Գիւղական հողային բանկի վկայագիրներ.	149½
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ.	100⅞
» Մոսկուայի	101
5½% Օդեսայի	100¼
5% Թիֆլիզի	99⅜
5% Գրաւակ. արժեթ. հող. բանկերի Խարկովի	100¼
» Պոլտաւայի	100
» Ֆուլայի	100¼
» Կիեւի	101
» Մոսկուայի	101½
» Բեսարաբիայի	100
» Ներքին Սամարայի	100⅝
» Դօնսկոյ	100
» Վիլնոյի	100¼
6% և 5% Թիֆլիզի	101½ և 99½ գն.
» Քութայիսի	101½ և 99½ գն.

ՋԱՆԱՁԱՆ

Հեռագրական ցաւակցութիւն.—Ամսոյս 17-ին առաւօտեան 2½ ժամին վախճանուել է «Մշակ» լրագրի հրատարակիչ Մարիամ Մելիք-Աղամալեանցը։ «Մշակի» հետեւեալ օրը լոյս տեսած համարում, որ տպագրուել է նոյն իսկ հրատարակչի մահուան օրը, յուլիսի 17-ի երեկոյեան, կարդում ենք հետեւեալը.

«Մեր լրագրի հրատարակիչ հանգուցեալ տիկին Մելիք-Աղամալեանի մահվան առթիւ ստանում ենք ցաւակցական հեռագիրներ զանազան կողմերից»։

Որդ մի քանի ժամերի ընթացքում «զանազան կողմեր» հեռագիրներ են ուղարկուած, որոնք հաղորդել են մահուան բօթը, այդ հեռագիրները ստացուել են այդ զանազան կողմերում, այնտեղ ցաւակցական հեռագիրներ են կազմուել և ուղարկուել «Մշակի» խմբագրութեան, որ այդ զանազան կողմերից ստացուած հեռագրների մասին լուր է կազմում, ուղարկում է գրաքննիչներին և տպագրում է նոյն օրը։

Մի՞թէ մահը, ընութեան այդ խորհրդաւոր երեւոյթը, որ թելադրում է օտար մարդուն անձնատուր լինելու դառն խորհրդածութիւնների, իսկ մտերմին՝ վշտի, «Մշակի» խմբագրութեանը ծառայել է միմիայնակի՞ ուրվում և այն մի անհիթեթ ուրվում անելու. . . Սակայն «ո՞վ հաւատաց»։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱԻԱՍԱԲԳԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱԲԳԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՁԻՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ—ՁԵՐԲԻՆԻՆԱ—11—12 ժ. կանանց և ներքին հ.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍՅԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏՅԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Փ, ՊՐՕՏԱՍՅԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱԲԳԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱԲԳԵԱՆ։

Բժշկական ընդունարան
ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.
ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ
Սօլոլակ, Սերգիեւսկի փողոց № 14.

Իւր բացակայութեան պատճառով ամառս հիւանդներին կ'ընդունէ դոկտոր Սամուէլ Շահ-Պարոնեանցը նշանակեալ ժամերին։

Բացի դեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵՔՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիկական մեթոդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը { կինարմատներ և երեխաներ

1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան { տղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ-մասնաժ անող կին և մասնաժիստ պարոն։

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում գուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու գուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում գուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ գուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ գուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ գուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Դանձակ գուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Դանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Դանձակից Թիֆլիզ գուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 րոպէին։

ՓՈՍՏԱՑԻՆ ԵՐԹԵԼԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղեւորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղեւորվում է էկսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղեւորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԻՆ-ԲԺԻՇԿ
Ա. Ի. ՇԱԲԵՐԻՆԻՆԱ.

Ընդունում է հիւանդներին ամենայն օր առաւօտեան 9—11 ժ. և երեկոյեան 5—7-ը։ Գօլովինսկի Պրոսպեկտ, տան Ալելովի։

Ղարաբաղու Հայոց թեմական դպրանոցի համար հարկաւոր է մի ՀԱՄԱԼՍԱԲԱՆԵՒՈՐՈՑ ուսուցիչ ՌՈՒՍԱՑ լեզուի և ՌՈՒՍԱՑ պատմութեան, որ պիտի ունենայ շաբաթը 26 դաս և տարին 1200 ռ. ռոճիկ, մի ուսուցիչ ՌՈՒՍԱՑ լեզուի (15 դաս), ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ և ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ (13 դաս), պետական միջնակարգ դպրոց աւարտած, որ պիտի ունենայ շաբաթը 28 դաս և տարին 700 ռ. ռոճիկ, և մի ուսուցիչ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ և ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ, որ պիտի ունենայ շաբաթը 21 դաս և տարին 600 ռ. ռոճիկ։ Խնդիրները հանդերձ վկայագրով պէտք է ուղարկել այս հասցէով. Шуша. Инспектору армянской духовной семинаріи. (3—3)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ

„ԹԱՏՐՈՆ"

ԳԵՂԱՍԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԵԳԷՍ

1895 թուակ. ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

(№ 3)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1) «Ակամայ բժիշկ», կօմ. 3 գործ., 2) «Մեղէա», դր. 4 գ., 3) «Մ. Ամբիկեանց», 4) «Գիւղական ասպետութիւն», 5) «Ա. Ս. Գրիբօեդով», 6) «Գր. Արբահամեան», 7) «Թատրոնի լուսատու աստղերը», 8) «Բանաստեղծութիւններ», 9) «Լ. Բեթհո-վէն», 10) «Թատրոնական քրոնիկոն», 11) «Գրախօսութիւն», 12) «Կրիտիքական փորձեր», 13) «Ապահարգան», ողբ. 1 գործ., 14) «Մպասում ենք հիւրերին», կօմ. 1 գործողութեամբ։

«ԹԱՏՐՈՆԻ» երկրորդ գիրքը (№ 4-րդ) լոյս կը տեսնէ առաջիկայ նոյեմբերին։

Հրատարակիչ՝ ԱՂ. ԹԱՐԽԱՆԵԱՆ։

Զարունակում է ներկայ 1895 թ. բաժանորդագրութիւնը։ Տարեկան բաժանորդագրին է 3 ռ. օտարաքաղաքացիների համար 3 ռ. 30 կ., արտատպման 10 ֆրանկ։

Դիմել հետեւեալ հասցէով՝ Тифлисъ, Александру Тарханьянъ, կամ՝ Tiflis, Alexandre Tarkhanian. (3—2)

ՈՒՍՈՒՑՉԱՑ ՀԱՄԱՐ

	Ռ.	Կ.
1) Ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար (հին ուխտի)	1	75
2) Ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար (նոր ուխտի)	2	5
3) Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին	—	10

ԱՉԱԿԵՐՏԱՑ ՀԱՄԱՐ

4) Դասատետր կրօնի Ա. տարի գ. տիպ.	—	15
5) » » Բ. » Ե. «	—	20
6) » » Գ. » Դ. «	—	30
7) Սրբազան պատմութիւն հին ուխտի գ. տիպ.	—	40
8) » » նոր ուխտի բ. «	—	40

Վերոյիշեալ գրքեր ցանկացողները կարող են դիմել կամ ուղղակի ինձ (Тифлисъ: Священнику Сааку Саакянцу) կամ «Կենդրոնական գրավաճառանոց»։

Ինձ դիմողներն ստանում են 20% զեղջ (ճանապարհածախսն իրանց վրայ է)։ Սահակ քահ. Սահակեանց։

(10—4)

„ԲԱԳՐԵՒԱՆԴ"

Ջրաբաշխ գաւառ, մասն Ա.

Գրեց Ս. ՀԱՑԿՈՒՆԻ

Հայաստանի այդ ամենակարեւոր գաւառի մասին տեղագրական, ազգագրական, հնագիտական մանրամասն տեղեկութիւններով հարուստ մի գիրք է սա, թէ բանասէրի և թէ հայրենասէրի ընթերցանը արժանի։ Գիրքը մեծածաւալ 384 երեսէ կը բաղկանայ, գինը 1 ր. 50 կոպ. կը վաճառուի Թիֆլիզի հայ գրավաճառների մօտ։ (5—4)

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ԻՎԱՆ ՏՈՒՐԳԵՆԵՎԻ

„ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ"

(Стихотворенія въ прозѣ)

Թարգմանեց ԱՂԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Գինն է 50 կ., ճանապարհածախսով 60 կ.։

Ցանկացողները դիմում են Թիֆլիզ «Կենդրոնական գրավաճառանոցին» կամ թարգմանչին՝ Москва, Новая Басманная, домъ Шибаевой контора М. Л. Шоршорова, *Александру Цатурянъ*. (5—4)

ՀԱՇՈՒԵԿՑԻՊ

ԹԻՖԼԻԶԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻ

31-Ն Յուլիսի 1895 թ.

ԳԱՀԱՆՋՔ	Թիֆլիզում:		Բաք. և Բաթ. բաժնում:		Ընդամենը:	
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	137,712	78	148,559	—	286,271	78
2. Ընթացիկ հաշիւ պետական բանկայի բաժնում	577,961	66	810,100	—	1,387,961	66
3. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստորագր.	3,290,489	—	907,433	97	4,197,922	97
4. Զեղչ. մուրհակաց մի ստորագր. ապահոված Տպնոս թղթ.	283,823	74	—	—	283,823	74
5. Զեղչումն տոկոսաբեր թղ., կարօնների և այլն.	36,033	31	2,912	05	38,945	36
6. Փոխառութիւն գրաւականով՝						
ա) Պետութ- ապահ. տոկոսաբեր թղթերի	1,531,345	58	528,240	62	2,059,586	20
բ) » ոչ » » »	199,285	—	31,195	—	230,480	—
գ) Ապրանքների	7,951	—	595,525	05	603,476	05
դ) Ոսկու և արծաթի	—	—	2,063	38	2,063	38
7. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր	690,845	—	99,544	86	790,389	86
8. Տոկոսաբեր թղթեր պահեստի դրամագլխի	253,862	43	—	—	253,862	43
9. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր	37,405	74	40,476	—	77,881	78
10 Թղթակիցներ՝						
ա) Նոցա հաշիւը (Loro)	8,542,173	80	—	—	8,542,173	80
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	12,100,505	58	—	—	12,100,505	58
11, Բաժինների հաշիւը Կենդրոնական վարչութեան հետ	924,201	88	—	—	924,201	88
Կենդրոնական վարչութեան հաշիւները բաժինների հետ	—	—	1,032,157	54	1,032,157	54
12, Գնումն և վաճառումն արժեթղթերի ըստ յանձնարարութեան	138,550	—	—	—	138,550	—
13, Պայմանաժամն անցուցած փոխառութիւն	25,549	—	23,950	—	49,499	—
14. Բողոքուած մուրհակներ	11,335	—	2,150	—	13,485	—
15. Ընթացիկ ծախսեր	33,388	57	25,687	53	59,076	10
16. Կահ-կարասիք և սկզբնական ծախսեր	3,129	56	7,347	14	10,476	70
17. Յետ ստացուելիք ծախսեր	8,000	36	5,920	48	13,920	84
18. Անշարժ կալուածք	—	—	49,195	15	49,195	15
Ռ. Ա.	28,833,548	99	4,312,357	81	33,145,906	80

ՊԱՐՏՔ	Թիֆլիզում:		Բաք. և Բաթ. բաժնում:		Ընդամենը:	
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000	—	—	—	1,000,000	—
2. Պահեստի դրամագլուխ	253,875	64	—	—	253,875	64
3. Դրամագլուխ անշարժ կալքի շինուցման	—	—	1,229	88	1,229	88
4. Դրամական աւանդներ՝						
ա) Պայմանաժամով	4,137,750	—	924,862	—	5,062,612	—
բ) ցՊահանջ	274,867	—	166,301	—	441,168	—
գ) Ընթացիկ հաշուով, հասարակ	1,577,014	95	1,873,855	59	3,450,870	54
դ) » » պայմանաւոր	—	—	327,399	26	327,399	26
5. Թղթակիցներ՝						
ա) Նոցա հաշիւը (Loro)	8,406,855	39	—	—	8,406,855	39
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	11,785,993	95	—	—	11,785,993	95
6. Բաժինների հաշիւը Կենդրոնական վարչութեան հետ	—	—	817,570	45	817,570	45
Կենդրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	1,042,072	83	—	—	1,042,072	83
7. Բանկայի բաժնատոմսերի անվճար կտրօնների բաշխը	8,412	35	—	—	8,412	35
8. Չվճարուած տոկոսներ աւանդների ընթացիկ հաշիւների և այլ գործողութիւնների	96,757	30	36,811	04	133,568	34
9. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	174,946	11	74,428	41	249,374	52
10. Փոխանցիկ դրամներ	75,003	47	89,900	18	164,903	65
Ռ. Ա.	28,833,548	99	4,312,357	81	33,145,906	80

Дозволено цензурою, Тифлисъ 18-го Іюля 1895 года. Տպարան Մ. Մարտիրոսեանցի և Ընկ. Типографія М. Мартиросянца и К°. На Михайловской ул., № 81.